Ճանաչի՛ր ինքդ քեզ

# կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 10.05.2023թ. չորեքշաբթի թիվ 21-22 (1098-1099)

# Եղիցի հաղթանակ եւ հաղթակա՛ն խաղաղություն

## Բեռլին - Շուշի - ...

*Մեր բաժին հաղթանակը*... Առաջին աշխարհամարտը մեզ «պարգեւեց» ցեղասպանություն... Երկրորդ աշխարհամարտում մեր մասնակցությունն ամենազորեղն էր՝ պատերազմի ներքաշված բոլոր ժողովուրդների համեմատությամբ... Բոլորս ենք հպարտությամբ կրկնում՝ Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է շուրջ **600.000** հայ, զոհվել՝ ավելի քան **300.000**-ը. խորհրդային զորամիավորումները ղեկավարել են **5** հայ մարշալ, **64** գեներալ (պատերազմից հետո նրանց թիվը դարձավ **87**). Հայաստանը կազմավորել է **6** ազգային դիվիզիա, որից Թամանյանը միակ ազգային դիվիզիան էր, որ մտավ Բեռլին. հայ մարտիկներից **116**-ը ստացել են Խորհրդային Միության հերոսի կոչում, նրանցից երկուսը՝ կրկնակի. հաղթանակի համար խոշորագույն ներդրում ունեցած հայ գիտնականներից եւ ճարտարագետներից շատերը, որոնց անունները նոր-նոր է գաղտնազերծվում, դարձել են Սոցիալիստական աշխատանքի հերոսներ, այդ թվում՝ կրկնակի, եռակի... Չշարունակենք: Այո՛, մեր մասնակցությունը փառահեղ էր եւ, թերեւս, ամենահերոսականը:





Բեռլինում՝ Ռայխստագի ավերված շքամուտքի առաջ, մենք պարեցինք մեր *«Հաղթանակի Քոչարին»*... Դա փաստ է: Դա պատմություն է: Դա հայ զորական ուժի փառահեղ էջն է: Սակայն փորձենք վերհիշել, վերլուծել, թե ինչ էր մտածում հայ զինվորն այդ պահին: Թերեւս երկու զգացում ուներ նա իր մտքում՝ անձնական եւ անանձնական: Առաջինը այն, որ ողջ է, եւ այլեւս վերացավ զոհվելու վտանգը՝ պատերազմն ավարտվեց: Երկրորդը՝ Գերմանիան պարտվեց, եւ Գերմանիայի պարտությանը զուգահեռ, բնականաբար, պարտվեց եւ նրա ծպտյալ դաշնակիցը՝ Թուրքիան, եւ պարտադրված է լինելու վերադարձնելու մեր հողերը... Ավա՜ղ, մեր երազանքը այս անգամ էլ չիրականացավ, եւ մեր բաժինը մնաց միայն *պատմությունն* ու նրա տված *դասը*. անգամ *«եղբայր»* ժողովուրդները քո հարցը չեն լուծելու եւ քեզ չեն աջակցելու, որովհետեւ *ազգերն ու պետությունները գտնվում են հավերժական մրցակցության մեջ եւ նույն ուղղությամբ նայում, մարտնչում, հաղթում են կարճատեւ մի ընթացքում միայն, երբ համընկնում են միմյանց շահերը:* Մեր շահերն այդպես էլ չհամընկան որեւէ *«եղբայր»* ժողովրդի շահերի հետ... Մենք օգնեցինք (այն էլ ինչպե՜ս) մեր *«եղբայրներին»*՝ ազատագրելու իրենց քաղաքները, իսկ նրանք տարիներ անց սատարեցին մեր թշնամուն՝ գրավելու մեր գյուղերը (հիշենք թեկուզ *«Կոլցո»* գործողությունը)...Ի՞նչ արած, այդպիսին է նորին սրիկայություն քաղաքականությունը: Ռուսական մի հաղորդաշար կար՝ *«Անհնարինը՝ ակնհայտ»* խորագրով... Մեզ համար ակնհայտն անգամ չի դառնում ակնհայտ ահա արդեն 300 տարի...

Մեր պատմության ընթացքում, որքան էլ տարօրինակորեն կրկնվող, մեր միամտությունը, մեր հավատը բարեկամության, եղբայրության, մարդասիրության նկատմամբ մեզ միշտ պարգեւել է բարոյական հաղթանակներ, բայց իրական պարտություններ ու կորուստներ: Եվ միայն այն դեպքերում, երբ ստիպված ենք եղել ապավինելու ինքներս մեզ ու զենք ենք վերցրել, հաղթել ենք մշտապես... Վկա՝ **Շուշին**:

***շարունակությունը՝ էջ 3***

## ՀՀ վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ ուղերձը՝ Մայիսի 9-ի առիթով



Սիրելի՛ ժողովուրդ,
սիրելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս՝ Երկրորդ աշխարհամարտում, Հայրենական Մեծ Պատերազմում հաղթանակի 78-րդ տարեդարձի առիթով:

Պատերազմում տարած հաղթանակով քաղաքակիրթ մարդկությունը ոչ ասաց ամենամեծ չարիքներից մեկին՝ ֆաշիզմին: Այդ գործում անգնահատելի է հայ ժողովրդի դերը, որի ավելի քան կես միլիոն ներկայացուցիչներ Խորհրդային բանակի, դաշնակցային բանակների կազմում, պարտիզանական եւ դիմադրության ընդհատակյա գործունեության մեջ զգալի ներդրում ունեցան մարդկությունը ֆաշիզմից փրկելու գործում:

Բազմաթիվ հայորդիներ այդ պայքարում դրսեւորվել են իրենց սխրագործություններով, հանուն մարդկային քաղաքակրթության տվել իրենց կյանքը: Պատերազմում ունեցանք ավելի քան 300 հազար զոհ: Շուրջ 107 հայորդիներ արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման, բազմաթիվ հայեր բարձր պարգեւներ են ստացել ԽՍՀՄ-ի եւ դաշնակից երկրների կողմից՝ հայ ժողովրդի պատվավոր տեղն ապահովելով ֆաշիզմի դեմ պայքարում:

Սիրելի՛ ժողովուրդ, սիրելի՛ հայրենակիցներ,

Վերջին տարիներին մայիսի 9-ը դիմավորում ենք դառնացած ու տագնապներով: Սա առաջին հերթին կապված է 2020 թ. 44-օրյա պատերազմի ծանր հետեւանքների հետ, պատերազմի ընթացքում Շուշիի կորստով, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի Հանրապետության շուրջ ծավալվող ագրեսիվ քաղաքականությամբ: Միջազգային փոթորկալից իրադրությունն ավելի է սրում այդ իրավիճակը, որովհետեւ մեր տարածաշրջանի անվտանգային համակարգերը դեֆորմացված են:

Այս իրավիճակում Հայրենիքի համար իրենց կյանքը տված նահատակների առաջ մեր ամենամեծ պարտավորությունը մեր պետականության ուժեղացումն ու զորացումն է, եւ այս ծրագրի մաս պիտի լինի մեր տարածաշրջանում մեր հարաբերությունների կարգավորումը:

Այս մոտեցումն է, որ պիտի երաշխավորի հայ ժողովրդի լինելիությունն իր Հայրենիքում: Ուժեղ ու զարգացած Հայաստանի Հանրապետությունն է, որ պիտի դառնա մեր բոլոր նահատակների մեծարման ու հիշատակի առհավատչյա:

Փա՛ռք Հայրենիքի համար իրենց կյանքը տված բոլոր նահատակներին: Փա՛ռք պետությունը կայացնելու համար ամեն հնարավորն ու անհնարն անող բոլոր անխոնջ մարտիկներին:

### Այս համարում

- *2022-2023 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման ժամանակացույցը եւ աշխատակարգը* — ***տե՛ս՝ էջ 2, 4-5***
- *4-րդ դասարանում գիտելիքների ստուգման ուղեցույցները եւ թեստերի նմուշները* — ***տե՛ս՝ էջ 6-7***
- *9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույցները, հարցաշարերը եւ հարցատոմսերը* — ***տե՛ս՝ էջ 8-21***

## Մայիսի 9-ի առթիվ Նախագահ Վահագն ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆՆ այցելել է *«Հաղթանակ»* զբոսայգի

Հաղթանակի ու խաղաղության տոնի առթիվ Հանրապետության նախագահ **Վահագն Խաչատուրյանը,** Ազգային ժողովի նախագահ **Ալեն Սիմոնյանի,** փոխվարչապետ **Մհեր Գրիգորյանի** եւ երկրի բարձրագույն ղեկավարության հետ այցելել է *«Հաղթանակ»* զբոսայգի եւ հարգանքի տուրք է մատուցել հայրենիքի պաշտպանության եւ խաղաղության համար զոհվածների հիշատակին:

Հանրապետության նախագահի անունից ծաղկեպսակ է զետեղվել Անհայտ զինվորի հուշակոթողի մոտ:

Երկրի բարձրագույն ղեկավարության անդամները ծաղիկներ են խոնարհել Մեծ հայրենականի զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

## Վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԸ Մոսկվայում ներկա է եղել Հայրենական մեծ պատերազմում հաղթանակին նվիրված զորահանդեսին

**Նիկոլ Փաշինյանը** մայիսի 9-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում ներկա է եղել Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 78-րդ տարեդարձին նվիրված զորահանդեսին:

Մինչ այդ, Կրեմլում ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինը** դիմավորել է ՀՀ վարչապետին եւ զորահանդեսին մասնակցելու համար Մոսկվա ժամանած Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի եւ Թուրքմենստանի ղեկավարներին:

Զորահանդեսից հետո ՀՀ վարչապետը եւ մյուս երկրների առաջնորդները ծաղիկներ են խոնարհել անհայտ զինվորի հուշահամալիրին:









## 2022-2023 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման ժամանակացույց

### Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ. ապրիլի 12-ի N 495-Ա/2 հրամանի հավելվածի

**4-րդ դասարան**

**Մայրենի**՝ գրավոր (թեստ)՝ **08.06.2023թ.**

**Մաթեմատիկա**՝ գրավոր (թեստ)՝ **13.06.2023թ.**

**Ռուսաց լեզու**՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար՝ **քննաշրջանի ընթացքում**

**Մայրենի լեզու և գրականություն**՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար՝ **քննաշրջանի ընթացքում**

**9-րդ դասարան**

**Հայոց լեզու** (գրավոր, թեստ) **05.06.2023թ.**

**Մաթեմատիկա** (գրավոր, թեստ) **12.06.2023թ.**

**Բնագիտություն** *(«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»*՝ սովորողի ընտրությամբ առարկայից՝ գրավոր, թեստ) **19.06.2023թ.**

**Հայոց պատմություն** (բանավոր) **քննաշրջանի ընթացքում**

**Գրականություն** (բանավոր) **քննաշրջանի ընթացքում**

**Օտար լեզու** *(«Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»,* այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ, բանավոր) **քննաշրջանի ընթացքում**

**Ֆիզկուլտուրա**՝ նորմատիվների հանձնում՝ **քննաշրջանի ընթացքում**

**Ռուսաց լեզու**՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար՝ **քննաշրջանի ընթացքում**

**Մայրենի լեզու և գրականություն** առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար՝ **քննաշրջանի ընթացքում**

**12-րդ դասարան**

**Հայոց լեզու և հայ գրականություն** (գրավոր) **07.06.2023թ.**

**Հայոց պատմություն** (գրավոր) **14.06.2023թ.**

**Մաթեմատիկա** (գրավոր) **21.06.2023թ.**

**Ռուսաց լեզու**՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար **քննաշրջանի ընթացքում**

**Մայրենի լեզու և գրականություն** առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար **քննաշրջանի ընթացքում**

# Խաղաղության աղոթք՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայիսի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի *Սուրբ Վարդան եւ Սուրբ Հովհաննես Մկրտիչ մատուռ-մկրտարանում* **Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց խաղաղության աղոթք՝ Հայաստանի եւ Արցախի խաղաղության եւ ապահովության համար:

Հայոց Հովվապետը, Մայր Աթոռի միաբաններն ու ներկա հավատացյալ ժողովուրդը միասնաբար աղոթք վերառաքեցին առ Աստված՝ հայցելով, որ Տերը խաղաղության մեջ ապահով ու անսասան պահի Հայաստան եւ Արցախ հայրենի աշխարհները, անառիկ՝ հայրենյաց սահմանները, ամուր եւ քաջ՝ հայոց բանակի զինվորականներին:

Այս առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամը բերեց ներկա ժողովրդին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ խաղաղության աղոթքի առիթով

*«Եվ ա՛յս է այն հաղթությունը,*
*որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը»*
(Ավետարան Հովհաննեսի, 5.4):



*Սիրելի՛ ժողովուրդ Հայոց,*

*Հայրական սիրով բերում ենք ձեզ Մեր օրհնությունը եւ բարեմաղթանքները՝ մայիսի 9-ի՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթանակի եւ Շուշիի ազատագրման նվիրական օրվա առիթով:*

*Այս տոները մեզ համար դարձել են խորհրդանիշը բռնության ու չարի դեմ պայքարի, հայրենի հողի վրա անկախ կյանք կերտելու մաքառումի եւ ազատատենչ ոգու հաղթության: Քրիստոնյա մեր ժողովուրդը պատմության ընթացքում հաճախ ենթարկվել է արհավիրքների ու նեղությունների, սակայն իր լուսավոր հավատքով ու գալիքի տեսիլքով վեր է հառնել փորձություններից եւ առ Աստված ապավինությամբ վերահաստատել իր վճռականությունը արժանապատիվ գոյության եւ հարատեւության:*

*Ծանր եւ դժվարին օրեր ենք ապրում այսօր: Ամենօրյա բռնաճնշումների եւ նվաստացումների է ենթարկվում շրջափակման մեջ գտնվող Արցախի մեր ժողովուրդը: Նվազ չեն նաեւ Հայաստանի առջեւ հառնած սպառնալիքները, տակավին անհանգիստ են սահմանները, լեցուն՝ թշնամու սադրանքներով ու հարձակումների վտանգներով: Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերները մտահոգություններով ու տագնապներով են համակել հոգիները մեր ժողովրդի զավակների՝ ինչպես հայրենիքում, այնպես եւ սփյուռքում:*

*Այս ցավալի իրավիճակում անգամ, երբ կորցրել ենք Շուշին եւ Արցախ աշխարհի զգալի հատվածը, երբ ունենք հազարավոր զոհեր ու վիրավորներ, բազում գերեվարվածներ ու անհայտ կորածներ, մենք նշում ենք այս օրը՝ համոզումով, որ ամուր եւ անսասան է մեր ժողովրդի ոգին,անկոտրում՝ ապրելու եւ արարելու կամքը, եւ հաստատուն՝ հայրենիքի հանդեպ նվիրումը:*

*Սիրելինե՛ր, մայիսի 9-ը ոչ միայն արժեւորումն է անցյալի հաղթությանց, այլեւ ամրագրումը հանձնառու պատասխանատվության՝ հավատքով եւ միասնականությամբ կերտելու մեր գալիք հաղթանակները: «Եւ ա՛յս է այն հաղթությունը, որ հաղթում է աշխարհին՝ մեր հավատը»,- հաստատում է առաքյալը:*

*Մենք հավատում ենք մեր ժողովրդի աստվածատուր ուժին՝ պարտությունը վերածելու հաղթանակի, մահը՝ կյանքի, ցավը՝ ուրախության: Հավատում ենք նաեւ, որ կարող պիտի լինենք մերժել մեզանից վախն ու թերահավատությունը, անտարբերությունն ու հարմարվողականությունը՝ վստահությամբ, որ համազգային ու հայրենական կյանքում պիտի գերակայեն ու հաղթանակեն աստվածասիրությունը, հայրենասիրությունն ու արժանապատվությունը:*

*Արդ, սիրելի՛ ժողովուրդ հայոց, ապրենք ու գործենք այս գիտակցությամբ եւ մայիսի 9-ը դիտարկենք ոչ միայն Երկրորդ աշխարհամարտի, արցախյան հերոսամարտի պատմական իրադարձությունների, Շուշիի ազատագրման նշանակալի թվական, այլ որպես առաքելություն, որպես ջանք եւ կամք՝ ուղղված նոր հաղթանակների ու ձեռքբերումների կերտմանը: Ծառացած մարտահրավերներին հանդիման՝ մեր պարտքն է լինել միասնական եւ բոլոր հնարավոր միջոցներով ջանքեր գործադրել հանուն մեր պետականության զորացման, Արցախի ինքնիշխանության ու շահերի պաշտպանության: Հավատքով զորացյալ մնանք, չվհատվենք եւ չընկրկենք նեղությունների ու դժվարությունների առջեւ, արթուն պահենք քաջարի նույն ոգին, որ դրսեւորվել է մեր ժողովրդի հերոս զավակների կողմից Հայրենական մեծ պատերազմում եւ Շուշիի ազատագրման օրերին:*

*Աղոթենք միասնաբար առ Երկնավոր մեր Տերը եւ հայցենք, որ օրհնի եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ ու անվտանգ պահպանի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, զորացնի մեզանում հույսն ու լավատեսության ոգին՝ ի սեր հայրենյաց եւ մեր ժողովրդի բարօր ու լուսավոր գալիքի:*

*Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամեն:*

# Բեռլին - Շուշի - ...

***սկիզբը՝ էջ 1***



Շուշիի հաղթանակը հաճախ համեմատում ենք Սարդարապատի հետ:

Ի՞նչ է **Սարդարապատը** մեզ համար: Բացի այն, որ մեր զորական ուժի տարած ամենափայլուն հաղթանակներից մեկն է մեր պատմության ընթացքում, նաեւ այն կարեւորագույն իրադարձությունն է, որ վերականգնեց մեր **հավաքական ինքնավստահությունը**, մեր **հավատը սեփական ուժի հանդեպ**: Սարդարապատով հիմնավորվեց *երրորդ ուժի բացառման* գաղափարը, ինչն, ավա՜ղ, հետագայում կրկին մոռացության մատնվեց, երբ մեր 300-ամյա **ստրկախտը** *կարմիր* գույն հագավ... Սարդարապատով նաեւ սկզբնավորվեց **Հայկական հարցի** լուծման նորագույն փուլը՝ այն հասցնելով առ այսօր միջազգային իրավունքի տեսակետից ուժը պահպանած **Սեւրի պայմանագրի** իրողությանը, որը դարձյալ մոռացության մատնվեց մեր պատմության 20-րդ դարի 70-ամյա խորհրդային հատվածում...

... Բայց այդ նույն 20-րդ դարը նշանավորվեց **Արցախյան** հուժկու շարժումով, որն ունեցավ **Համազգային** ընդգրկում, վերածվեց **Ազատամարտի** եւ մեզ պարգեւեց մի նոր փայլուն հաղթանակ՝ **Շուշին**... Շուշիի պատմական հաղթանակին հաջորդեցին մեր տարածքների *ազատագրումը*, Արցախի փաստացի *վերամիավորումը* Մայր Հայաստանի հետ, *Հայկական երկրորդ պետության* հիմնադրումը... Այսքանով հանդերձ՝ Շուշին նաեւ *երկրորդ Սարդարապատ* է, որ մեր *հավաքական գիտակցության* մեջ կրկին արթնացնում է *հավատը սեփական ուժի հանդեպ*, հոգեբանական պարարտ հող դառնում *ստրկախտը* վերջնականապես թոթափելու եւ *հայկական հարցի* լուծումը վերջնական՝ *հաղթական* փուլ տեղափոխելու համար:

... Տարիների հեռավորությունից ակնհայտ է Սարդարապատի եւ Շուշիի **միացյալ քաղաքական դասը.** *մեր մեծագույն հաղթանակները մենք ձեռք ենք բերում, երբ «մեծ քաղաքականությունից» կտրվում ենք եւ մնում ինքնուրույն, երբ մեր «բարեկամները», ինչ-ինչ հանգամանքների բերումով չեն կարողանում իրենց կամքը թելադրել մեզ եւ մեզ մենակ են թողնում...*

Մի պահ պատկերացնենք՝ *եթե մենք կարողանանք կազմակերպել* ***600.000****-անոց մի հավաքագրում եւ պատրաստ լինենք տալու* ***300.000*** *զոհ, կկարողանա՞նք վերջնականապես ծնկի բերել ոսոխին եւ լուծել Հայկական հարցը՝ գոնե Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռի սահմաններում...* Այսքան հնարավոր այս տարբերակը դեռեւս մնում է հեռավոր ու անիրատեսական, քանի դեռ մենք չգիտենք, թե ինչ ենք անելու դրանից առաջ ու դրանից հետո... Կարողանալու՞ ենք կազմակերպել աննախադեպ **ներգաղթեր**, թե՞ նորից լքելու ենք Հայրենիքը՝ անձնական բարեկեցության հեռանկարով կամ նորից նպաստելու ենք (դարձյալ անձնական բարեկեցությանը տուրք տալով), որ մեր հայրենակիցները հեռանան Հայրենիքից... Ու քանի դեռ **հայրենակենտրոն** չենք, մեր խնդիրները կմնան չիրականացած երազանքներ:

Քիչ է **դառնալ** հայրենակենտրոն միայն օրհասական պահերին: Հայրենակենտրոն պետք է **մնալ** անընդհատ, անընդմեջ, շարունակական, որտեղ էլ որ ապրելիս լինենք, ինչ գործի տեր էլ որ լինենք՝ չմոռանալով, որ ի կատար ածելու **Ուխտ** ունենք... Միայն թե կարողանանք **ազգային ոգին** պահպանել մշտապես... Անդուլ, անդադար, քայլ առ քայլ ամրացնելով ու հզորացնելով մեր **Հայրենիքը**:

**Աստված** մեզ ոչինչ չի խնայել, ո՛չ միտք, ո՛չ կամք, ո՛չ եռանդ... մնում է միայն հավատալ ու գործել: Հավատալ ու գործել:

Մենք այստեղ գիտակցաբար անտեսեցինք 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված եւ ազգային պատուհաս դարձած 44-օրյա պատերազմը... Անտեսեցինք, շրջանցեցինք, որովհետեւ համոզված ենք, որ, թեպետ այդ պատերազմում մեր հերոսների գործած սխրանքների ու անմեղ նահատակության առաջ խոնարհվելու հավերժ եւ նրանց հիշատակը խնկարկելու ենք մշտապես, սակայն շուտով, շատ շուտով այդ խայտառակ պատերազմի հետեւանքները ջնջելու ենք մեր հիշողությունից, մեր իրականությունից, եւ երբեւէ մեր պատմության որեւէ էջում դրանք տեղ չեն ունենալու... անգամ՝ բացասական կերպարների նկարագրությունների մեջ:

Մեր հերոսները մեր բոլոր հաղթական պատերազմներում կռվել են՝ *մահը միմյանցից խլելով:* Յուրաքանչյուրս փորձենք **եղբայրասիրության** օրինակ վերցնել մեր հերոսներից եւ պարզապես *ապրել՝ միմյանց կյանք պարգեւելով*...

...Եվ մեր հաղթանակները կդառնան **շարունակական՝** բացառելով բոլո՛ր պարտությունները՝ թե՛ անփառունակ, թե՛ արժանապատիվ:

***Գ.Մ.***

# 2022-2023 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգ

## Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ. դեկտեմբերի 6-ի N 78-Ն հրամանի հավելվածի

**1.** Սույն աշխատակարգով կարգավորվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) **4-րդ դասարաններում** *գիտելիքների ստուգման*, **9-րդ դասարաններում** *ավարտական* եւ **12-րդ դասարաններում** *պետական ավարտական* քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը եւ բողոքարկումը:

**2.** Յուրաքանչյուր տարվա **4-րդ դասարաններում** *գիտելիքների ստուգման*, **9-րդ դասարաններում** *ավարտական* եւ **12-րդ դասարաններում** *պետական ավարտական* **քննությունների** անցկացման **օրերը** հաստատվում են Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի անհատական իրավական ակտով:

**3. 4-րդ դասարանում** գիտելիքների ստուգումն անցկացվում է.

*1) **«Մայրենի»** առարկայից՝ գրավոր (թեստ). քննությանը տրվում է **60** րոպե.*

*2) **«Մաթեմատիկա»** առարկայից՝ գրավոր (թեստ). քննությանը տրվում է **60** րոպե.*

*3) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար նաեւ՝ **«Ռուսաց լեզու»** առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.*

*4) Ազգային փոքրամասնությունների դասարաններում նաեւ՝ իրենց **«Մայրենի լեզու եւ գրականություն»** առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.*

*5) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների ցանկության դեպքում **«Մաթեմատիկա»** առարկայի թեստերը թարգմանվում են ռուսերեն:*

*6) Գիտելիքների ստուգման առաջադրանքների թեստերը (առնվազն 4 տարբերակ) **կազմում են Հաստատության մեթոդմիավորումները՝** ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված **նմուշների:***

*Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված եւ Հաստատությունում գործածվող դասագրքերից:*

*7) Հաստատության տնօրենը հաստատում է առաջադրանքների թեստերը, կնքում եւ ծրարում: Ծրարներից մեկը բացվում է գիտելիքների ստուգման օրը, քննասենյակում, սովորողների ներկայությամբ:*

*8) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչը եւ տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:*

*9) Գրավոր աշխատանքը գնահատվում է **10 միավորային** համակարգով:*

*10) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների ստուգման ժամանակ տրվում է լրացուցիչ **40 րոպե՝** ապահովելով սովորողի կարիքին համապատասխան պայմաններ:*

**4. 4-րդ դասարաններում** *գիտելիքների ստուգումը* անցկացվում է ***հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 15 օրվա ընթացքում:***

**5.** Հաստատությունների **9-րդ դասարանի** սովորողները հանձնում են ավարտական քննություններ.

*1) **«Հայոց լեզու»** առարկայից՝ գրավոր թեստ. քննության տեւողությունը՝ **90 րոպե.***

*2) **«Գրականություն»** առարկայից՝ բանավոր.*

*3) **«Հայոց պատմություն»** առարկայից՝ բանավոր.*

*4) **«Մաթեմատիկա»** առարկայից՝ գրավոր. քննության տեւողությունը՝ **90 րոպե.***

*5) **«Բնագիտություն»** («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ գրավոր (թեստ). քննության տեւողությունը՝ **90 րոպե.***

*6) **«Օտար լեզու»** («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» եւ այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝ բանավոր.*

*7) **«Ֆիզկուլտուրա»** առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում).*

*8) Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար սահմանված գիտելիքների ստուգումն անցկացվում է նաեւ **«Ռուս գրականություն»** առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում.*

*9) Ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար անցկացվում է նաեւ գիտելիքների ստուգում **«Մայրենի լեզու եւ գրականություն»** առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:*

**6.** Ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար *«Բնագիտություն»* (*«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»*) առարկայի ավարտական քննության թեստը սովորողի ցանկության դեպքում թարգմանվում է ռուսերեն:

**7. 9-րդ դասարանում** բանավոր քննությունները կազմակերպելու, անցկացնելու եւ գնահատելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են *հաստատության տնօրենը* կամ նրա *նշանակած ուսուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի ուսուցիչը (քննող ուսուցիչ)* եւ *ընթերական (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ):* Ելնելով *աշակերտների թվից*՝ բանավոր քննությունը կարող է կազմակերպվել **1-ից ավելի** օրերում:

**8.** Սովորողը քննասենյակ է մտնում անվանացանկում նշված հերթականությանը համապատասխան, ստորագրում իր անվան դիմաց, ընտրում քննատոմսը, ստանում բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանները, լրացուցիչ հարցերը եւ դրանց պատասխանները:

**9.** Սովորողի պատասխանը գնահատվում է **20-միավորանոց** համակարգով:

**10.** ***«Գրականություն», «Հայոց պատմություն»*** եւ ***«Օտար լեզու»*** առարկաների **9-րդ դասարանների** ավարտական քննությունների տոմսերը կազմում են *Հաստատության մեթոդմիավորումները*՝ ըստ *ԳԹԿ-ի կողմից մշակված եւ տրամադրված հարցաշարերի եւ տոմսերի նմուշների:* ***«Գրականություն»*** եւ ***«Օտար լեզու»*** առարկաների ավարտական քննական առաջադրանքների հարցաշարերը եւ տոմսերի նմուշները կազմվում են **7-9-րդ դասարանների** *ծրագրային նյութից,* ***«Հայոց պատմություն»*** առարկայի քննական առաջադրանքները՝ **6-9-րդ դասարանների** *ծրագրային նյութից:*

**11.** Բանավոր քննությունները ձայնագրվում կամ արձանագրվում են: Արձանագրության մեջ ներառվում են հարցատոմսի համարը, հարցերը, պատասխանները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները եւ տվյալ սովորողը:

**12. 9-րդ դասարաններում** ավարտական քննություններն անցկացվում են ***հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում:***

**13. 9-րդ դասարանի** ավարտական քննություններ հանձնողների հայտերը հաստատության տնօրենը լրացնում եւ ԳԹԿ-ին է փոխանցում **փետրվարի 20-ից մինչեւ մարտի 15-ը:**

**14. 12-րդ դասարանում** շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ.

*1) **«Հայոց լեզու եւ հայ գրականություն»** առարկայից՝ գրավոր (թեստ) քննության տեւողությունը՝ **120 րոպե:***

*2) **«Հայոց պատմություն»** առարկայից՝ գրավոր (թեստ)՝ քննության տեւողությունը՝ **120 րոպե:***

*3) **«Մաթեմատիկա»** առարկայից՝ գրավոր (թեստ)՝ քննության տեւողությունը՝ **120 րոպե:***

*4) **«Ֆիզկուլտուրա»** առարկայից՝ նորմատիվների հանձնում (ստուգարք) **հունիսի 6-րդ աշխատանքային օրվանից մինչեւ քննաշրջանի ավարտն** ընկած ժամանակահատվածում,*

*5) **«Ռուս գրականություն»** առարկայից՝ բանավոր՝ (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար)՝ քննաշրջանի ընթացքում.*

*6) **«Մայրենի լեզու եւ գրականություն»** առարկայից բանավոր՝ (ազգային փոքրամասնությունների դասարանների համար)՝ քննաշրջանի ընթացքում:*

**15. 12-րդ դասարաններում** պետական ավարտական քննությունները անցկացվում են **հունվարի երկրորդ շաբաթվա առաջին աշխատանքային օրվանից՝ 10 օրվա ընթացքում,** եւ **հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում:**

**16.** Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գերազանցության մեդալի (այսուհետ՝ Մեդալ) հավակնորդները ***«Հայոց լեզու եւ հայ գրականություն»*** եւ ***«Մաթեմատիկա»*** առարկաներից միասնական քննություններին կարող են մասնակցել **հունվարին** կամ **հունիսին,** իսկ նույն առարկաները որպես ավարտական քննություններ ընտրելու դեպքում՝ **միայն հունիսին:**

**17. Հունվարին** կազմակերպվող *պետական ավարտական* քննություններին մասնակցելու համար սովորողները **մինչեւ դեկտեմբերի 10-ը** *գրավոր* դիմում են հաստատության տնօրենին՝ հեռավար ուսուցման դեպքում կարելի է դիմել էլեկտրոնային փոստով: Հաստատության տնօրենը **դեկտեմբերի 15-ից մինչեւ 30-ը՝ ժամը 12:00-ն** քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է *«Գնահատման եւ թեստավորման կենտրոն»* ՊՈԱԿ (այսուհետեւ՝ **ԳԹԿ**):

**18. Հունիսին** կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները **մինչեւ ապրիլի 1-ը** *գրավոր* դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենը **ապրիլի 1-ից մինչեւ մայիսի 2-ը** ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է **ԳԹԿ**-ին:

**19. Միասնական քննությանը** մասնակցող սովորողը *պետական ավարտական* քննություն կարող է հանձնել այն առարկայից, որը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով:

**20. Ե՛վ հունվարին, ե՛ւ հունիսին** *միասնական քննություններ* հանձնած սովորողի ավարտական փաստաթղթում լրացվում է միասնական քննության ավարտական մասի **ավելի բարձր դրական** գնահատականը:

**21.** Միեւնույն առարկայից *ե՛ւ միասնական, ե՛ւ պետական ավարտական* քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է *միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը):*

**22. Ավարտական եւ պետական ավարտական** քննությունները սկսվում են **ժամը 10:00-ին:** Սովորողները ուսումնական հաստատություն են ներկայանում **ժամը 9:00-ին:**

**23. 9-րդ** եւ **12-րդ** դասարանում *ավարտական եւ պետական ավարտական* քննական առարկաների թեստերը կազմվում են **ԳԹԿ**-ի կողմից, *առաջադրանքներն* ընտրվում են Նախարարության կողմից *երաշխավորված շտեմարաններից* եւ Հաստատությունում *գործածվող դասագրքերից* եւ (կամ) *ձեռնարկներից:*

**24. *«Ֆիզկուլտուրա»*** առարկայի **9-րդ դասարանում** *ավարտական* քննությունը եւ **12-րդ դասարանում** *ամփոփիչ ստուգարքը* ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված **հանձնաժողովի** կողմից՝ հետեւյալ կազմով. *հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ եւ հանձնաժողովի երկու անդամներ:*

**25. Մեդալի** հավակնորդներին թույլատրվում է մասնակցել քննության՝ **Նախարարության հաստատած ցուցակի համաձայն:** *Քննությունից բացակայած կամ ուշացած Մեդալի հավակնորդ սովորողը զրկվում է Մեդալ ստանալու իրավունքից:*

**26.** Քննությունների միջեւ ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են **խորհրդատվություններ՝** *Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով.*

**27. 4-րդ, 9-րդ** եւ **12-րդ** դասարաններում անցկացվող ***«Ռուսաց լեզու», «Ռուս գրականություն»*** (բանավոր, ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար) եւ ***«Մայրենի լեզու եւ գրականություն»*** (բանավոր, ազգային փոքրամասնությունների համար) առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը եւ հարցատոմսերը կազմում են տվյալ Հաստատության **առարկայական մեթոդական միավորումները՝** Նախարարության կողմից *երաշխավորված դասագրքերի եւ նյութերի հիման վրա:*

*շարունակությունը՝ էջ 5*

# 2022-2023 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման եւ անցկացման աշխատակարգ

## Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թ. դեկտեմբերի 6-ի N 78-Ն հրամանի հավելվածի

*սկիզբը՝ էջ 4*

**28. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝** մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է **անհատական ուսուցման պլանով** իրականացված գնահատման հիման վրա (ԱՈւՊ):

**29. *Ավարտական*** եւ ***պետական ավարտական*** քննությունները կազմակերպվում են **քննական կենտրոններում:** Քննական կենտրոն է դառնում *յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ քննական կենտրոնի ղեկավարն է:*

**30.** Քննական յուրաքանչյուր կենտրոնի *կազմակերպիչների թիվը սահմանվում է սույն աշխատակարգի **31-րդ** կետի պահանջի համաձայն: Ստուգող հանձնաժողովների անդամների թիվը պայմանավորված է ստուգվող գրավոր աշխատանքների քանակով:* Նախընտրելի է՝ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ստուգի **25** գրավոր աշխատանքից ոչ ավելի:

**31.** Քննական կենտրոններում սովորողները բաժանվում են *խմբերի:* Յուրաքանչյուր խմբում կարող է լինել ոչ ավելի, քան **20 սովորող՝** խստորեն պահպանելով հակահամաճարակային կանոնները եւ սոցիալական հեռավորությունը: Եթե քննասենյակում կան մեկից ավելի խմբեր, ապա **առաջին** խմբի աշխատանքները համակարգում է **երկու** կազմակերպիչ, յուրաքանչյուր հաջորդ խմբի համար՝ **մեկ** կազմակերպիչ, եթե քննասենյակի վերջին խմբում կա **10 եւ ավելի** սովորող՝ **եւս մեկ** կազմակերպիչ:

**32. Ավարտական** եւ **պետական ավարտական** քննությունների *կազմակերպիչներին, օգնականներին, հերթապահներին* նշանակում է *քննական կենտրոնի ղեկավարը:* **Կազմակերպիչները չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:**

**33.** *Քննական կենտրոնի ղեկավարը* քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է **պատասխանատու կազմակերպիչ,** որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:

**34.** *Քննական կենտրոնի ղեկավարը* քննությունը սկսվելուց **մեկ ժամ առաջ** կատարում է կազմակերպիչների գրանցում եւ **վիճակահանությամբ** բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների:

**35.** Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:

**36.** Սովորողը քննություններին ներկայանում է **անձը հաստատող փաստաթղթով՝** *(ծննդյան վկայական, անձնագիր, նույնականացման քարտ):* **Մեդալի հավակնորդները՝** *անձնագրով կամ հաստատության տնօրենի կողմից տրված լուսանկարով տեղեկանքով:*

**37.** Սովորողը մոտենում է ***վիճակահանության*** *սեղանին* եւ ***վիճակահանության*** *թերթիկի* միջոցով ընտրում իր *նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, նստարանի համարը: Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում:*

**38.** Քննասենյակում *չի թույլատրվում տեղափոխություններ կատարել:*

**39.** Քննությունը սկսվելուց առնվազն **մեկ ժամ առաջ** *քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցչից ստանում է քննական թեստերի փաթեթները:*

**40.** Քննությունը սկսվելուց առնվազն **կես ժամ առաջ** *քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատու կազմակերպչին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի առաջադրանքներից:*

**41.** Քննություններին սովորողներին *չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական եւ այլ ուղեցույց-ձեռնարկներ:*

**42.** Սովորողի՝ քննասենյակում *տեղավորվելուց հետո,* քննական կենտրոնի ղեկավարը *քննասենյակ է բերում քննական թեստերի ծրարները:* Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների *փակ եւ ամբողջական* լինելու հանգամանքի վրա: Ծրարը բացելու համար պատասխանատուն հրավիրում է *առաջին նստարանին նստած սովորողներից մեկին:* Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում՝ հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ:

**43.** Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը սովորողներին տեղեկացնում է *քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաեւ բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց* եւ սովորողներին *ցուցումներ տալուց հետո* կազմակերպիչները բաժանում են **թեստերը:** Սովորողը, թեստը ստանալուն պես, **շապիկի համապատասխան մասում գրում է խմբի եւ իր նստարանի համարը:** Թեստերի վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է **քննության սկիզբը, տեւողությունը** եւ *գրատախտակին նշում է քննության սկիզբը եւ ավարտը:*

**44.** Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ *միայն քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ եւ միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:*

**45.** Խմբի կազմակերպիչը *ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում եւ հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպչին:*

**46.** Թեստերի առաջադրանքի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը *չեն քննարկվում:*

**47.** Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերը *փոխարինվում են նորով:*

**48.** Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից եւ կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել *Նախարարության եւ ԳԹԿ-ի ներկայացուցիչները:*

**49.** Քննության ավարտից **20 րոպե առաջ** քննասենյակի պատասխանատուն սովորողներին հիշեցնում է *առաջադրանքների պատասխանները համապատասխան ձեւաթղթերի վրա անցկացնելու մասին:*

**50.** Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում *մեկ անգամ նախազգուշացում ստացած սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:*

**51.** Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձեւաթղթի էջի վրա գրվում է՝ *«Հեռացված է քննությունից»: Քննասենյակի եւ խմբի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:*

**52.** Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր *առաջադրանքը* եւ *ստորագրում իր անվան դիմաց:* Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել եւ, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: *Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:*

**53. Սահմանված ժամկետում** գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են **անավարտ** վիճակում:

**54.** Պատասխանատուն քննական աշխատանքները քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված քննական աշխատանքները *վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որեւէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (եթե կան):*

**55. Քննական գրավոր աշխատանքները,** մինչեւ դրանց **ստուգման ավարտը,** *պահպանվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում:*

**56. Ավարտական** եւ **պետական ավարտական** քննական առաջադրանքները ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված *ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 14:00-ից՝ ԳԹԿ-ի համակարգչային կայքում տեղադրված առաջադրանքների ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է:*

**57.** Ավարտական եւ պետական ավարտական քննությունների գրավոր աշխատանքներն ստուգվում են **20-միավորանոց** համակարգով:

**58. 9-րդ դասարանում** *«Բնագիտություն»* առարկայի քննության ստուգող հանձնաժողովների անդամների **50 տոկոսը** տվյալ առարկայի մասնագետներ են:

**59. 12-րդ դասարանում** ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:

**60.** Քննական արդյունքները գնահատելիս, քննական հանձնաժողովի անդամների միջեւ տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների *ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:*

**61.** Քվեարկության արդյունքներում ստացված հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝

*1) **4-րդ** դասարանում՝ դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը.*

*2) **9-րդ** եւ **12-րդ** դասարաններում՝ քննական կամ առարկայական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը.*

*3) նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամ(ներ)ը արձանագրության մեջ կարող է(են) կատարել հատուկ նշում:*

**62.** Ստուգումն իրականացվում է ԳԹԿ-ի կողմից հաստատված եւ հրապարակված ***«Ցուցումներ»***-ի պահանջներին եւ գնահատման չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սեւագրությունը չի ստուգվում եւ չի գնահատվում:

**63.** Ավարտական եւ պետական ավարտական քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են **տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14:00-ին:** Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ:

**64.** Քննական կենտրոնում քննական գնահատականների ցուցակներն առանձնացվում են ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:

**65.** Քննությունների կազմակերպման, անցկացման եւ արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել՝

*1) քննության անցկացման կարգի խախտման մասին.*

*2) քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին:*

**66.** Սույն աշխատակարգի **65-րդ** կետի **1-ին** ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոք ներկայացնել քննական կենտրոնի ղեկավարին՝ քննության ավարտից անմիջապես հետո: Կենտրոնի ղեկավարը տեղում քննարկում եւ պատասխանում է բողոքը ներկայացնողին:

**67.** Սույն աշխատակարգի **65-րդ** կետի **2-րդ** ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են քննող հանձնաժողովի նախագահին՝ բանավոր քննության դեպքում՝ **քննության պահին** կամ **մինչեւ քննասենյակից դուրս գալը,** գրավոր քննության դեպքում՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ **24 ժամվա ընթացքում՝** Հաստատության տնօրենին: Ավարտական եւ պետական ավարտական գրավոր քննության բողոքի արդյունքները ոչ ուշ, քան դիմումն ընդունելուց հետո՝ **24 ժամվա ընթացքում,** գրավոր ներկայացվում է դիմողին:

**68.** Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել **վերադասության կարգով՝** Նախարարություն եւ (կամ) դատարան:

4-րդ դասարան

# Մայրենի.
# գիտելիքների ստուգման ուղեցույց եւ թեստի նմուշ

## Թեստի կառուցվածքը եւ առաջադրանքների գնահատման չափանիշները

Թեստը պարունակում է **10 առաջադրանք**, որոնցից **3**-ը ենթաառաջադրանքներով են: Յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1-ական միավորով:

Թեստը բաղկացած է **2 մասից:**

**1-ին մասը** պարունակում է որևէ տեքստ՝ գեղարվեստական կամ գիտահանրամատչելի: Տեքստերի ծավալները կախված են դրանց տեսակից. գեղարվեստական բովանդակությամբ տեքստերը պարունակում են շուրջ **350 բառ**, գիտահանրամատչելիները՝ ավելի պակաս՝ շուրջ **250 բառ**[1]:

1-ին մասի առաջադրանքներից 5-ը վերաբերում են տեքստի բովանդակությանը (դրանցից 2-ը 2-ական ենթաառաջադրանքներով են. ընդհանուր հաշվով՝ 7 հարց՝ տեքստի բովանդակության վերաբերյալ): Այդ հարցերով ստուգվում են ընթերցանության զանազան ունակություններ՝ ուշադրություն, հետևություններ ու եզրակացություններ անելու կարողություն, տեքստը վերլուծելու, գնահատելու և արժևորելու հմտություններ:

**2-րդ մասը** պարունակում է տեքստից անկախ[2] 5 առաջադրանք, որոնցով ստուգվում են՝

*1. 6-րդ առաջադրանքի ուղղագրական դժվարություն ունեցող բառերում (4 բառ) բաց թողած տառի տեղադրում. յուրաքանչյուր ճիշտ գրված բառի համար տրվում է 1-ական միավոր,*

*2. բառի իմաստի իմացություն, հոմանիշների և հականիշների ճանաչում, բառի փոխաբերական իմաստով գործածություն, դարձվածքների ճանաչում,*

*3. բառի կազմության ճանաչում՝ պարզ, բարդ (հոդակապով, անհոդակապ), ածանցավոր (նախածանցավոր, վերջածանցավոր), բարդածանցավոր,*

*4. գոյականի, դրա թվի և տեսակների՝ հատուկ, հասարակ, ածականի, թվականի, շաղկապի ճանաչում,*

*5. նախադասության անդամների ճանաչում՝ ենթակա, ստորոգյալ, կոչական, լրացումներին տրվող հարցերի իմացություն:*

Թեստի առավելագույն միավորն է **15**-ը: Թեստի կատարմանը հատկացվում է **60 րոպե**:

## Գնահատման սանդղակը

| Միավորը | Գնահատականը | Միավորը | Գնահատականը |
|---|---|---|---|
| 0-1 | 1 | 8-9 | 6 |
| 2 | 2 | 10-11 | 7 |
| 3 | 3 | 12-13 | 8 |
| 4-5 | 4 | 14 | 9 |
| 6-7 | 5 | 15 | 10 |

## Թեստ (նմուշ)

### 1-ին մաս. *Կարդա՛ տեքստը եւ պատասխանի՛ր տրված հարցերին*

Դավիթի կյանքը գրեթե հրաշալի էր. նա իրենց բակում շատ ընկերներ ուներ, որոնց հետ ամեն օր՝ դասերից հետո, գնում էր գնդակ խաղալու: Միայն թե Դավիթը մի մեծ խնդիր ուներ. դա նրա փոքր քույրն էր՝ Լիլին: Լիլին ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, որ Դավիթին ու նրա ընկերներին բոլորովին դուր չի գալիս, որ ինքը միշտ նրանց հետ է լինում: Հենց տղաները դուրս էին գալիս բակ, Լիլին իր փոքրիկ ոտիկներով վազում էր նրանց մոտ և ուրախ-ուրախ ցատկոտելով՝ հայտնում.

- Ես եկա՜…

Բոլորը հոգոց էին հանում: Իրականում աղջիկը առանձնապես նեղություն չէր տալիս նրանց. շատախոս չէր, չէր նվնվում, չէր խառնվում նրանց խաղերին: Ճիշտն ասած, շատ բան չէր էլ կարող անել: Այնքան փոքրիկ էր, որ ո՛չ կարող էր գնդակ խաղալ, ո՛չ ծառերը մագլցել, միայն իր սև աչիկներով լուրջ նայում էր տղաներին, և ուր նրանք գնում էին, ինքն էլ նրանց հետևից գնում էր:

Դավիթը փորձում էր մորը համոզել, որ Լիլիին չթողնի իրենց հետևից գալ:

- Ինչո՞ւ պիտի իմ քույրը միշտ մեզ հետ լինի,- հարցնում էր նա,- ինչո՞ւ Արմենի քույրը չի գալիս, Հակոբի քույրը չի գալիս:

Մայրը ծիծաղում էր.

- Արմենի քույրը ընդամենը վեց ամսական է, Հակոբը ընդհանրապես քույր չունի… Քո բախտն այդ հարցում չի բերել:

Մի օր Դավիթը ուզում էր տղաների հետ գնդակ խաղալ: Սկզբում նրանք մի ծանր գնդակ ունեին: Բայց մի անգամ այդ գնդակը Սարգիս քեռու պատուհանը կոտրեց: Ի՜նչ պատմության մեջ ընկան: Գնդակն էլ այլևս հետ չստացան: Հիմա արդեն թեթև գնդակով էին խաղում: Այդ օրը տղաները դեռ նոր էին դուրս եկել, երբ Լիլին սովորականի պես վազեց նրանց մոտ ու ասաց.

- Ես եկա՜…

Տղաները, ինչպես միշտ, ձևացրին, թե նրան չեն նկատում: Նրանք սկսեցին խաղալ: Տղաներից մեկը այնպես ուժգին հարվածեց գնդակին, որ այն այս անգամ էլ ընկավ Սարգիս քեռու բակը: Նրանք վազելով մոտեցան ցանկապատին և տեսան գնդակը խոտերի մեջ՝ այնքան հեռու, որ ձեռք չէր հասնի: Հակոբը փորձեց անցնել ցանկապատի ճաղերի արանքով, բայց չկարողացավ:

- Ես չեմ կարող անցնել,- հուսահատ ասաց նա,- ցանկապատը շատ խիտ է: Եվ մեզանից ոչ մեկը չի կարող:

Իրավիճակն անելանելի էր: Բոլորից շատ Դավիթն էր տխրել:

- Այս ամենը Լիլիի պատճառով եղավ,- ասաց նա,- Տիգրանը այդքան ուժեղ խփեց գնդակին, որովհետև Լիլիի վրա էր բարկացել:

- Մի նայե՛ք Լիլիին, տեսեք, թե նա ինչ փոքրիկ է,- ասաց Արմենը, - Լիլի՛, այստե՛ղ արի:

Լիլին վազելով եկավ՝ ասելով.

- Ես եկա՜…

Հեշտությամբ մտնելով ճաղերի արանքից՝ Լիլին դուրս բերեց գնդակը ու հանձնեց հիացած տղաներին: Դավիթը հպարտությամբ նայում էր նրան, հետո ասաց.

- Ես քեզ գնդակ խաղալ կսովորեցնեմ:

**1. Նշի՛ր երկու բան, որոնցով նկարագրվում է Լիլին:**

Պատասխան՝ ________________, ________________

**2. Ո՞րն էր Դավիթի հիմնական խնդիրը:**

1) Հարևանը գնդակը հետ չէր տալիս:
2) Քույրն ամեն տեղ ուզում էր նրա հետ գնալ:
3) Ընկերը կորցրել էր Դավիթի միակ գնդակը:
4) Մայրը բարկանում էր, երբ ինքը քրոջ հետ կոպիտ էր վարվում:

**3. Ուշադի՛ր կարդա տեքստի երկխոսությունները և պատասխանի՛ր տրված հարցերին:**

***ա. Ի՞նչ է պատասխանում մայրը տղայի հարցին:***

1) Նրա ընկերներից ոչ մեկը քույր չունի:
2) Ընկերների մայրերը աղջիկներին թույլ չեն տալիս բակ դուրս գալ:
3) Նրանցից մեկը քույր չունի, իսկ մյուսինը դեռ շատ փոքրիկ է:
4) Լիլին իրենց բոլորովին չի խանգարում, չի նվնվում և խաղերին չի խառնվում:

***բ. Ըստ Դավիթի՝ ինչո՞վ էր մեղավոր Լիլին, որ գնդակը հարևանի բակն ընկավ:***

Պատասխան՝ ________________________________

________________________________

**4. Ինչո՞ւ տղաները չէին կարող հարևանին խնդրել, որ գնդակը վերադարձնի:**

Պատասխան՝ ________________________________

________________________________

**5. *ա. Ինչո՞վ օգնեց փոքրիկ աղջիկը տղաներին:***

Պատասխան՝ ________________________________

________________________________

***բ. Ինչի՞ց ենք մենք իմանում, որ եղբոր վերաբերմունքը նրա հանդեպ փոխվեց:***

Պատասխան՝ ________________________________

________________________________

### 2-րդ մաս. *Կատարի՛ր տրված առաջադրանքները*

**6. Տրված բառակապակցությունների ընդգծված բառերում բաց թողնված տառի կամ տառակապակցության տեղում դատարկ վանդակ է: Արտագրի՛ր ընդգծված բառերը՝ դատարկ վանդակի փոխարեն լրացնելով բաց թողած տառը կամ տառակապակցությունը:**

տաք **հա□ուստ**, հմուտ **□րսորդ**,
լայն **մի□անցք**, երկարավիզ **ընձու□տ**

Պատասխան՝ ________________, ________________,
________________, ________________

**7. Ո՞ր բառի իմաստն է՝ *փորելով գետնի տակից որևէ հին բան հանել:***

1) պեղել 2) զննել 3) նշմարել 4) կերտել

**8. Տրված բառերից որի՞ դիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության:**

1) ***աշխարհամաս*** – հոդակապով բարդ բառ
2) ***զարմանալի*** – վերջածանցավոր բառ
3) ***ջրհոր*** – անհոդակապ բառ
4) ***մատիտ*** – ածանցավոր բառ

**9. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված:**

1) ***դպրոց*** – իր ցույց տվող գոյական
2) ***այգի*** – ածական
3) ***թեև*** – շաղկապ
4) ***երեսուն*** – թվական

**10. Ո՞րն է տրված նախադասության ենթական:**

*Վերադարձին մի անտառի մեջ թագավորը հանդիպեց մի ծերունու:*

Պատասխան՝ ________________________________

________________________________

*1. Ըստ հնարավորին՝ տեքստերը կարող են կազմվել ավելի պակաս բառաքանակներով (գեղարվեստականը՝ ոչ պակաս, քան 250, գիտահանրամատչելին՝ ոչ պակաս, քան 180):*
*2. Որոշ դեպքերում՝ 2-րդ մասի առաջադրանքները, ըստ նպատակահարմարության, կարող են առնչվել տեքստին:*

4-րդ դասարան

# Մաթեմատիկա. գիտելիքների ստուգման ուղեցույց եւ թեստի նմուշ

## Թեստի կառուցվածքը եւ առաջադրանքների գնահատման չափանիշները

Թեստը բաղկացած է 17 առաջադրանքներից, որոնք երեք տեսակի են` ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխանով առաջադրանքներ և ընդարձակ պատասխանով առաջադրանքներ:

**Ընտրովի պատասխան** են պահանջում **1-10-րդ առաջադրանքները**, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

**Կարճ պատասխան** են պահանջում թեստի **11-15-րդ առաջադրանքները**, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

**Ընդարձակ պատասխան** են պահանջում **16-րդ և 17-րդ առաջադրանքները**, որոնք խնդիրներ են: Այդ խնդիրները լուծելիս աշակերտը պետք է ներկայացնի խնդրի լուծման ամբողջ ընթացքը: **17-րդ խնդիրը** լուծելիս համառոտագրելը պարտադիր է:

Եթե **16-րդ խնդրի** համար տրվում է առավելագույնը 2 միավոր (յուրաքանչյուր ճիշտ քայլի համար` 1 միավոր), ապա **17-րդ առաջադրանքի** համար` 3:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը` 20 միավոր), որը համապատասխանեցվում է **10 միավորանոց համակարգի:**

## Գնահատման սանդղակը

| Միավորը | Գնահատականը | Միավորը | Գնահատականը |
|---|---|---|---|
| 1 | 1 | 11-13 | 6 |
| 2-3 | 2 | 14-15 | 7 |
| 4-5 | 3 | 16-17 | 8 |
| 6-7 | 4 | 18-19 | 9 |
| 8-10 | 5 | 20 | 10 |

## Թեստ (նմուշ)

### Շրջանակի մեջ վերցրու 1-10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները

**1. Գտի՛ր այն թիվը, որը պարունակում է 5 հազարյակ, 4 տասնյակ եւ 7 միավոր:**
1) 54070 2) 5407 3) 5047 4) 5470

**2. Որքանո՞վ է յուրաքանչյուր կարգային միավոր փոքր իր հաջորդ կարգային միավորից:**
1) 1-ով 2) 10-ով 3) 10 անգամ 4) 100 անգամ

**3. Ինչպե՞ս կփոխվի երկու թվերի գումարը, եթե գումարելիներից մեկը մեծացնենք 13-ով:**
1) կփոքրանա 13-ով 2) կմեծանա 26-ով 3) կմեծանա 13-ով 4) կմնա անփոփոխ

**4. Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն` կստանաս անհավասարություն. 3 կգ 40 գ > 3 կգ * 1գ**
1) 3 2) 4 3) 5 4) 6

**5. Ընտրի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են աճման կարգով:**
1) 4626, 5519, 74287, 64362 3) 74287, 64362, 4626, 5519
2) 4626, 5519, 64362, 74287 4) 74287, 64362, 5519, 4626

**6. Երկու թվերի գումարը 435 է: Առաջին թիվը կազմում է գումարի $\frac{2}{5}$ մասը: Գտի՛ր երկրորդ թիվը:**
1) 87 2) 174 3) 261 4) 348

**7. Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 6 կմ 3 մ -ը մետրերով:**
1) 603 մ 2) 6300 մ 3) 6030 մ 4) 6003 մ

**8. Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 5 ր 42 վ-ը վայրկյաններով:**
1) 542 վ 2) 292 վ 3) 342 վ 4) 162 վ

**9. Ուղղանկյան երկարությունը հավասար է 27 սմ, իսկ լայնությունը` 18 սմ: Գտի՛ր ուղղանկյան մակերեսը:**
1) 45 սմ2 2) 90 սմ2 3) 486 սմ2 4) 243 սմ2

**10. Նշի՛ր այն գծապատկերը, որի $\frac{4}{9}$ մասը ներկված է:**


1)


2)


3)


4)

### 11- 15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրիր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում

**11. Թվային ճառագայթի վրա տրված են A(5) եւ A(14) կետերը: Գտի՛ր A(5) կետի հեռավորությունը A(14) կետից:**




Պատ.`………………

**12. Հաշվի՛ր 8-ին բազմապատիկ բոլոր այն երկնիշ թվերի գումարը, որոնք բազմապատիկ են 12-ին:**
Պատ.`………………

**13. Դի՛ր փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն:**
4500 : 350 – 40 · 5 = 30

**14.Հաշվի՛ր 3255 : 15 + (9321 – 8272) · 7 արտահայտության արժեքը:**
Պատ.`………………

**15. Կռահի՛ր օրինաչափությունը եւ տրված թվերից հետո ավելացրո՛ւ եւս մեկ թիվ:**
1, 4, 10, 19, …

### 16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրու առաջադրանքներից հետո նշված տեղում

**16. Գտի՛ր այն քառակուսու կողմի երկարությունը, որի պարագիծը հավասար է 4 սմ եւ 8 սմ կողմերով ուղղանկյան պարագծին:**
Պատ.`………………

**17. A կայարանից միաժամանակ հակառակ ուղղություններով շարժվեցին երկու գնացք, որոնցից մեկի արագությունը 80 կմ/ժ էր, իսկ մյուսինը` 20 կմ/ժ-ով ավելի: Որքա՞ն կլինի գնացքների միջեւ եղած հեռավորությունը 5 ժամ անց:**
Պատ.`………………

## Գնահատման եւ թեստավորման կենտրոն

ՀՀ կառավարության որոշումով` 2004 թվականին ստեղծվեց *«Գնահատման եւ թեստավորման կենտրոն»* պետական ոչ առեւտրային կազմակերպությունը: Նման կառույց ստեղծելու անհրաժեշտությունը պայմանավորված էր վերջին տարիներին կրթական ոլորտում տեղի ունեցող լուրջ փոփոխություններով`ուղղված մեր կրթության որակը միջազգային ասպարեզում ընդունելի եւ ճանաչելի դարձնելուն:

Գնահատման եւ թեստավորման կենտրոնի առաքելությունն է արդյունավետ եւ բարձրորակ գործունեությամբ նպաստել համընդհանուր փոխադարձ վստահության եւ հարգանքի մթնոլորտի ստեղծմանը: Կենտրոնի հանրակրթության գնահատման համակարգի հիմնական բաղադրիչ դառնալը պայմանավորված է հանրակրթական հաստատություններում կրթության որակի արտաքին գնահատման գործունեության իրականացմամբ:

Գնահատման նոր համակարգի սկզբունքներն են`

*- միասնական չափանիշների կիրառում հանրապետության ողջ տարածքում,*

*- օբյեկտիվ, վստահելի, արդյունավետ եւ թափանցիկ մեխանիզմների ներդրում,*

*- շրջանավարտների համար հավասար մեկնարկային պայմանների ստեղծում` նրանց հետագա մասնագիտական կրթությունն ապահովելու նպատակով,*

*- դպրոցից բուհ անցումային քննությունների գործընթացում սուբյեկտիվ գործոնի դերի առավելագույնս նվազեցում:*

Կենտրոնի համապատասխան ենթակառույցները (քննությունների կազմակերպման, թեստաբանության, համակարգչային եւ վերլուծական աշխատանքների, հրատարակչական բաժիններ) գնահատման համակարգը կատարելագործելու եւ առավել արդյունավետ դարձնելու նպատակով մշակում եւ իրագործում են սեփական գործունեության կազմակերպման եւ ներքին կառավարման ժամանակակից մեթոդներ ու միջոցներ:

Կենտրոնի առջեւ դրված նպատակներից բխում են նրա գործունեության հետեւյալ հիմնական ուղղությունները.

*1. Հանրակրթական հաստատությունների ընթացիկ, փոխադրական եւ ավարտական քննությունների անցկացման հայեցակարգի մշակում եւ իրականացում:*

*2. Հանրակրթական հաստատությունների արտաքին գնահատման արդյունքների վերլուծություն եւ հանրակրթության որակի ապահովման համար անհրաժեշտ բարեփոխման խնդիրների ձեւակերպում:*

*3. Գնահատման համակարգի կայացմանն ու զարգացմանը միտված հետազոտական աշխատանքների կազմակերպում եւ նորարարական գործունեության իրականացում:*

*4. Մասնակցություն կրթության որակի ուսումնասիրության միջազգային հետազոտական ծրագրերին եւ ինքնուրույն ազգային հետազոտական ծրագրերի իրականացում:*

*5. Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության գնահատման համակարգի իմաստի ու նշանակության, ինչպես նաեւ նրա կայացման առկա իրավիճակի ու հեռանկարների վերաբերյալ հասարակության գիտակցական պատկերացումների ձեւավորման գործընթացների իրականացում:*

ԳԹԿ աշխատակազմն առաջնորդվում է այն գաղափարով, որ յուրաքանչյուր աշակերտի, այսինքն` նաեւ վաղվա ուսանողի համար պետք է հնարավորություն ստեղծվի, որպեսզի նա հավասար պայմաններում կրթություն ստանա, դրսեւորի իր կարողությունները եւ ավելացնի գիտելիքների պաշարը` մասնագիտական լավ պատրաստվածության հասնելով: Այս առումով, դպրոցի ավարտական եւ բուհի ընդունելության քննություններն այն առանցքային փուլերն են, որոնց օբյեկտիվ ու արդար կազմակերպումը առողջ մրցակցային պայմաններ են ստեղծում ինչպես սովորողների, այնպես էլ կրթօջախների միջեւ:

9-րդ դասարան

# Ցուցումներ հիմնական դպրոցի ավարտական քննության ձեւաթղթի լրացման, ստուգման եւ գնահատման վերաբերյալ

**1. Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը**

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխանելու համար աշակերտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է կախված նրա քննական արդյունքը:

Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևի մասում կա չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում գրառել «X» նշանը: Օրինակ՝



Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանների գրառման համար պատասխանների ձևաթղթում նախատեսված են համապատասխան տեղեր: Յուրաքանչյուր առաջադրանքի պատասխանը (բառ, բառակապակցություն, թիվ, թվային արժեք՝ չափման միավորով) պետք է գրել պատասխանների ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում (չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ):

Աշակերտն ունի սխալ պատասխանն ուղղելու հնարավորություններ: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է գրել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «X» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

**2. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Եթե թեստ-գրքույկում բացակայում է ընդարձակ պատասխաններով առաջադրանքների լուծման ընթացքը, ապա պատասխանների ձևաթղթում միայն պատասխանի գրառման համար ***միավոր չի տրվում:***

Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքների՝ պատասխանների ձևաթղթում ջնջումների համար ***միավոր չի տրվում:***

Թեստ-գրքույկը և պատասխանների ձևաթուղթը լրացվում են **կապույտ գրիչով,** իսկ ստուգումը կատարվում է **կարմիր գրիչով:**

Թեստերի կարճ և ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) գնահատման չափանիշները տրվում են յուրաքանչյուր առարկայի ուղեցույցում:

**Ամփոփիչ վերջնական գնահատականը** որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է գնահատման 20 միավորանոց համակարգին՝ համաձայն սանդղակի:

**3. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը**

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

**Սիրելի՛ աշակերտ,**

Քննական թեստի առաջադրանքների կատարումը մեծ ուշադրություն է պահանջում: Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Առաջադրանքի պահանջը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ ուշադիր կարդալ այն, ապա անցնել պատասխանի ընտրությանը կամ խնդրի լուծմանը:

Խելամի՛տ օգտագործեք ժամանակը: Թեստը լրացնելու համար սահմանափակ ժամանակ է տրվում, և, քանի որ առաջադրանքներն իրենց բնույթով տարբեր են ու կատարման համար շատ կամ քիչ ժամանակ պահանջող, ապա պետք է կարողանաք ձեր ժամանակը ճիշտ բաշխել: Եթե ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը դուք կարող եք օգտագործել սևագրության համար: Ընտրովի պատասխանով և կարճ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելուց հետո չմոռանա՛ք պատասխաններն ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում, իսկ ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների կատարման համար թեստ-գրքույկի հատկացված տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված կատարել առաջադրանքի պահանջը:

**Մաղթում ենք հաջողություն**

### Բնագիտական (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) առարկաների գրավոր աշխատանքների գնահատման սանդղակ

| Միավորներ | Գնահատական | Միավորներ | Գնահատական |
|---|---|---|---|
| 0 | 1 | 15-17 | 11 |
| 1 | 2 | 18-20 | 12 |
| 2 | 3 | 21-23 | 13 |
| 3 | 4 | 24-26 | 14 |
| 4 | 5 | 27-28 | 15 |
| 5-6 | 6 | 29-30 | 16 |
| 7-8 | 7 | 31-32 | 17 |
| 9-10 | 8 | 33 | 18 |
| 11-12 | 9 | 34 | 19 |
| 13-14 | 10 | 35 | 20 |

# Հիմնական դպրոցի հայոց լեզվի ավարտական քննության ուղեցույց

9-րդ դասարանի հայոց լեզվի ավարտական քննությունը անցկացվում է թեստով:

Թեստը բաղկացած է 2 մասից և պարունակում է **32** առաջադրանք:

• **1-ին մասում 16** անկախ առաջադրանքներ են, որոնցից **12**-ը՝ ընտրովի պատասխաններով (տրվում են **4** տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ), **4**-ը՝ կարճ պատասխանով՝ տրված հարցի պատասխանի ինքնուրույն դուրսբերմամբ: Կարճ պատասխանով 4-րդ առաջադրանքը **4** միավորանոց է: Այս մասից աշակերտը կարող է հավաքել առավելագույնը **19** միավոր:

• **2-րդ մասում** տրվում է որևէ տեքստ և դրա հիման վրա կազմված առաջադրանքներ:

Տեքստը կարող է լինել գեղարվեստական կամ գիտահանրամատչելի: Գեղարվեստական տեքստը ընդգրկում է շուրջ **200** բառ, գիտահանրամատչելի տեքստը՝ շուրջ **150**: Այս մասի առաջադրանքների ընդհանուր քանակը **16** է, որոնցից **8**-ը ընտրովի պատասխանով են, **8**-ը՝ կարճ: Այս մասից աշակերտը կարող է հավաքել առավելագույնը **16** միավոր:

Յուրաքանչյուր առաջադրանքի և յուրաքանչյուր ենթահարցի ճիշտ պատասխանին տրվում է **1-ական** միավոր:

Թեստի առավելագույն միավորը **35** է, որը բերվում է գնահատման **20** միավորանոց համակարգի՝ համապատասխան սանդղակի միջոցով:

Թեստի առաջադրանքները լուծելու և պատասխանների ձևաթուղթը լրացնելու համար հատկացվում է **120** րոպե:

### Գնահատման սանդղակ

| Միավորներ | Գնահատական | Միավորներ | Գնահատական |
|---|---|---|---|
| 0-1 | 1 | 15-16-17 | 11 |
| 2 | 2 | 18-19-20 | 12 |
| 3 | 3 | 21-22 | 13 |
| 4 | 4 | 23-24 | 14 |
| 5 | 5 | 25-26 | 15 |
| 6 | 6 | 27-28 | 16 |
| 7-8 | 7 | 29-30 | 17 |
| 9-10 | 8 | 31-32 | 18 |
| 11-12 | 9 | 33-34 | 19 |
| 13-14 | 10 | 35 | 20 |

### Ցուցումներ՝ 9-րդ դասարանի հայոց լեզվի ավարտական քննության ձեւաթղթերը ստուգողներին եւ բողոքարկումն իրականացնողներին

• Ստուգել միայն **կարմիր գրիչով:**

• Ստուգումն սկսել՝ պատասխանների դատարկ թողած բոլոր տեղերում դնելով **Z** նշանը՝

*- ընտրովի պատասխանով առաջադրանքի բոլոր 4 վանդակներում, կարճ պատասխանով առաջադրանքի տողում, չօգտագործված ուղղման դաշտում:*

• Ընտրովի պատասխանով՝ **1-12** և **17-24,** առաջադրանքները ստուգելիս սխալ տեղում դրված **X** նշանը կարմիր գրիչով վերցնել օղակի մեջ: Միևնույն սյունակում մեկից ավելի նշում ունենալու դեպքում բոլորը կարմիր գրիչով վերցնել օղակի մեջ և տվյալ առաջադրանքի պատասխանը համարել սխալ, եթե անգամ ճիշտ է նշումներից որևէ մեկը:

• Կարճ պատասխանով՝ **13-16** և **25-32,** առաջադրանքները ստուգելիս ստուգողի կողմից լրացվող դաշտում տվյալ առաջադրանքի համարին համապատասխանող վանդակում կարմիր գրիչով դնել **X** նշանը, եթե պատասխանը ճիշտ է, և **Z** նշանը, եթե պատասխանը սխալ է:

• Կարճ պատասխանով առաջադրանքները ուղղման դաշտ չունեն: Եթե աշակերտը այս առաջադրանքների տողերում ջնջել և փոխել է պատասխանը, համարել սխալ:

**Բացառություն** են համարվում այն դեպքերը, երբ աշակերտը ակնհայտորեն խառնել է պատասխանների տողերը, օրինակ՝ լրացնելն սկսել է 1 տող ներքևից:

**• Կարճ պատասխանները գնահատելիս՝**

*- ճիշտ համարել աշակերտի կողմից թե՛ ուղիղ, թե՛ թեք ձևով գրված բառը, օրինակ՝ <u>պահանջ.</u> դուրս գրել բարդ բառը (բառը տեքստում բացառական հոլովով է՝ ջրհորից), <u>պատասխան.</u> ջրհոր կամ ջրհորից,*

*- եթե միևնույն տողում 1-ից ավելի պատասխաններ են, և այդ պատասխաններից մեկը սխալ է, առաջադրանքին միավոր չտալ,*

*- ուղղագրական և կետադրական սխալների դեպքում թեստից վաստակած ընդհանուր միավորից միավորներ հանել հետևյալ կարգով՝*

• 1 ուղղագրական սխալի դեպքում՝ 1 միավոր,
2 ուղղագրական սխալի դեպքում՝ 2 միավոր,
3 և ավելի ուղղագրական սխալների դեպքում՝ 3 միավոր,

• 2 կետադրական սխալի դեպքում՝ 1 միավոր,
3-4 կետադրական սխալի դեպքում՝ 2 միավոր,
5 և ավելի կետադրական սխալների դեպքում՝ 3 միավոր,
միայն 1 կետադրական սխալի դեպքում միավոր չհանել:

***Ծանուցում.*** **16**-րդ առաջադրանքում պահանջվում է տրված **4** բառերը ենթարկել համապատասխան ձևափոխությունների և համապատասխան հերթականությամբ տեղադրել նախադասության բաց թողած տեղերում: Յուրաքանչյուր ենթակետի համար **1-ական** միավոր է տրվում այն դեպքում, եթե տվյալ ենթակետում գրված է համապատասխան բառը, և այն ենթարկված է ճիշտ ձևափոխության (հոլով, հոլովում, թիվ, առում, դեմք, ժամանակաձև)՝ առանց քերականական սխալների: Օրինակ՝ միավոր չտալ, եթե ***փախչել*** բայը գրված է ***փախնում եմ*** բառաձևով, եթե անգամ գրված է ճիշտ տեղում և ճիշտ դեմքով, թվով և ժամանակաձևով:

*շարունակությունը՝ էջ 9*

9-րդ դասարան

# Հիմնական դպրոցի հայոց լեզվի ավարտական քննության ուղեցույց

*սկիզբը՝ էջ 8*

## Թեստի նմուշ

### Մաս 1

**1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը կամ տառակապակցությունը (փակագծերում նշվածներից որևէ մեկը):**

*1) բաց-թյա, ան-րինակ, տն-րեն (օ կամ ո)*
*2) կ-կվել, ճրագալույ-, մտա-ածին (ծ կամ ց)*
*3) հեղ-եղել, հայթ-այթել, խոնար-ել (հ կամ -)*
*4) ու-ևոր, ու-ակի, գործու-ում (ղ կամ ղղ)*

**2. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**

*1) մուգ(կապույտ), դռնե(դուռ), ի(սրտե)*
*2) ամենա(բարձր), ծովից(ծով), դեմ(դիմաց)*
*3) դեմ(առնել), ուս(ուսի), մեկ(երկրորդ)*
*4) անթիվ(անհամար), հարյուր(մեկ), մեջ(ընկնել)*

**3. Ո՞ր բառում է գաղտնավանկի ը-ն ճիշտ տեղադրված:**

*1) ս(ը)փոփել 2) ձեռ(ը)նպահ 3) խառ(ը)նվածք 4) խնդ(ը)րել*

**4. Ո՞ր հատվածում դարձվածք չկա:**

*1) Քանի՜ անգամ եմ ձեռքից գնացել,*
*Քանի՜ ցավից եմ պրծել աշխարհում...*

*2) Խելքս բան չի կտրում*
*Այս աշխարհի բանից:*

*3) Աչքերս քար են կտրում զարմանքից*
*Այս գարնան շենք ու շնորհքի վրա:*

*4) Անտառի խոր ու խրթին*
*Լռությունն է երերում…*

**5. Ո՞ր շարքում պարզ բառ չկա:**

*1) խնդիր, գարեջուր, մազանոթ*
*2) հրեղեն, ձիարշավ, ճանապարհ*
*3) ընձառյուծ, երանգ, խոսափող*
*4) գնդաձև, պատշար, շողշողուն*

**6. Ո՞ր տարբերակի բառերը հականիշներ չեն:**

*1) հակիրճ-երկարաշունչ*
*2) կայուն-երերուն*
*3) սնապարծ-համեստ*
*4) խրթին-կարևոր*

**7. Ո՞ր տարբերակում են ընդգծված բոլոր բառերը դերանուններ:**

1) ***Բոլորն*** *էլ* ***իրենց*** *դժվար մտքերի հետ էին. ձիերն էին համեմատում* ***իրար:***
2) *Աղբյուրի* ***մոտ*** *տեղի ունեցող* ***նրանց*** *զրույցը փոխեց* ***իր*** *խաղաղ ու առօրյա հունը:*
3) ***Ապա*** *ձիուն մոտենում էին* ***մի քանի*** *հոգի, թղթի վրա* ***ինչ-որ*** *նշումներ անում:*
4) ***Մինչև*** *անգամ տղան էր լուռ, որովհետև* ***ոչ ոք*** *սիրտ չուներ* ***նրան*** *լսելու:*

**8. Ո՞ր շարքի բառերից ոչ մեկը ու հոլովման չի ենթարկվում:**

*1) կաղին, ոչ ոք, նախապապ*
*2) տղամարդ, աղախին, արփի*
*3) կիրակի, ամուսին, հավաքատեղի*
*4) տատ, հայելի, շանթարգել*

**9. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

*1) պատահական, ոսկե, հիմա*
*2) լռակյաց, ալյուրոտ, մաքուր*
*3) այսպիսի, ձմեռային, ծեր*
*4) սարսափելի, դողացող, իմաստալից*

**10. Ո՞ր տարբերակն է տրված նախադասության քերականական և տրամաբանական շարունակությունը:**

Շարունակելով ճանապարհը՝ հասանք մի հեղեղատի,

*1) քանի որ խորհուրդ տվեցի ընկերոջս սպասել, մինչև հեղեղը դադարի:*
*2) որոնց բարձունքից լսվում էր բուի կռինչը:*
*3) թեկուզ և հանգստի համար հարմար պահ չէինք ընտրել:*
*4) որից պետք է անցնեինք դիմացի կիրճը:*

**11. Ո՞ր հատվածում անձնավորում** ***չկա:***

*1) Կապույտ մրրիկ է պայթել,*
*Կապույտ մշուշ է...*
*Ուռին ուզում է փախչել,*
*Բայց արդեն ուշ է:*

*2) Ուռին ճչում է կարծես.*
*-Հասե՛ք. աղետ է:-*
*Առուն ուշքի է եկել*
*Եվ արդեն գետ է:*

*3) Ինչ-որ տագնապ է ծորում,*
*Ինչ-որ սարսուռ է...*
*Ուշաթափվել է առուն,*
*Եվ ուռին լուռ է:*

*4) Հավքը բախվեց ուռենուն...*
*Ոստերից նրա,*
*Մոլորակներ թափվեցին*
*Քարերի վրա:*

**12. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

*1) Ջին գլուխը կախեց արածելու, մի երկու բերան խոտ պոկեց, բայց անհանգստացնող ինչ-որ բան կար, և ձին գլուխը բարձրացրեց:*

*2) Ես՝ հրացանս առաջ մեկնած, մատս ձգանին, վազեցի դեպի շունը, իսկ նա ահարկու հայացքով որսը մեխել է տեղում:*

*3) Ես իսկույն վազեցի՝ բռնելու եղնիկին, սակայն նա մի ակնթարթի մեջ թռավ լուսամուտից պարտեզը և ծածկվեց խավարի մեջ:*

*4) Նրա դեմքն այժմ խաղաղ էր. նա գտել էր մի միջոց, որ կարող էր հանգստացնել իրեն:*

**13. Նախադասությունները դասավորի՛ր քերականական և տրամաբանական ճիշտ հաջորդականությամբ: Գրի՛ր միայն նախադասությունների համարները:**

*1. Ջրի գլխին կանգնեցի, և երբ աղջիկը մի անգամ էլ բարձրացավ, նայեց իմ կողմը, ձեռքով արի:*

*2. Արտում կռացած կանայք կանաչին ընկած թռչունների էին նման:*

*3. Նա իսկույն կռացավ արտի վրա, իսկ ես արագացրի քայլերս՝ ձիապանին հասնելու:*

*4. Եվ այդ երամից մեկը՝ գորշ շորերով մի աղջիկ, ավելի հաճախ էր բարձրանում, ձեռքը դնում ճակատին, որ արևի շողերը չխանգարեն տեսնելու անտառի մեջ հալվող արահետը և միայնակ անցվորին:*

*Պատասխան՝* ________________________________

**14. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված բառագործածության սխալը և ուղղի՛ր:**

*Օրեր շարունակ երկինքը պատող ամպերը ցրվեցին, և փողոցները հեղեղած անձրևաջուրը սկսեց կամաց-կամաց տեղիք տալ:*

*Պատասխան՝ սխալ է՝* ________________________________
*պետք է լինի՝* ________________________________

**15. Գտի՛ր նախադասության մեջ թույլ տրված քերականական սխալը և ուղղի՛ր:**

Իմ քեռի Վահանը մայրիկիս ու քրոջս հետ վերադարձան ու մտան տուն՝ սուրճ խմելու:

*Պատասխան՝ սխալ է՝* ________________________________
*պետք է լինի՝* ________________________________

**16. Տրված բառերը տեղադրե՛լ բաց թողնված տեղերում՝ ենթարկելով համապատասխան փոփոխությունների: Պատասխանում համապատասխան թվերի դիմաց բառերը գրի՛ր նախադասության մեջ քո տեղադրած հերթականությամբ և համապատասխան քերականական ձևափոխություններով:**

*Երբ սև կետը ............. արևով ........... ճանապարհին, նա տեսավ երեք ձի, որոնք սլանում էին՝ ......... ձյան փոշի, որ ............ տակ շողում էր արծաթի գույնով:*

*(ողողել, բարձրանալ, արև, հասնել)*

*Պատասխան՝* 1.________________ 2. ________________
3. ________________ 4. ________________

### Մաս 2

**Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:**

**I**

1. Երկրի մթնոլորտի վերին նոսր շերտերում՝ 80-1000 կմ բարձրության վրա, երբեմն տեղի է ունենում բնության զարմանահրաշ երևույթներից մեկը՝ բևեռափայլը: 2. Դա մի յուրատեսակ լուսարձակում է, որ դիտվում է հիմնականում Երկրի բևեռային շրջաններում, հազվադեպ՝ նաև միջին լայնություններում: 3. Հայաստանում 1098-1100 թվականներին դիտվել է չորս բևեռափայլ: 4. Բևեռափայլը անչափ գրավիչ տեսարան է. երկնքի ամբողջ հյուսիսային կողմը լուսավորվում է կարմիր ու կանաչ երկու հսկայական, շողշողուն կամարներով: 5. Անընդհատ ձևափոխվելով ու երփներանգվելով՝ կամարները մեկ անհետանում են, մեկ նորից հայտնվում: 6. Հանկարծակի մութ երկինքը ասես նետահարում են պայծառ ճառագայթները, իսկ ժամանակ առ ժամանակ օդում կախվում են կարմիր ծոպերով զմրուխտե «վարագույրներ»: 7. Պայծառ, հիասքանչ բևեռափայլը, կամ ինչպես հյուսիսում են անվանում, հյուսիսափայլը, երկնքում փողփողում է մի քանի ժամ անընդհատ:

**II**

1. Բևեռափայլերը Արեգակի ակտիվության հետևանք են: 2. Արեգակի հսկայական շիկացած գունդը տիեզերական տարածություն է ճառագայթում վիթխարի քանակությամբ ջերմություն և արտանետում էլեկտրականությամբ լիցքավորված նյութի մանրագույն մասնիկների հոսքեր: 3. Այս երևույթը կոչվում է արեգակնային քամի: 4. Հասնելով երկրի մթնոլորտի վերին շերտերը՝ այդ մասնիկները բախվում են օդի մոլեկուլներին, և սրանք սկսում են փայլփլել տարբեր գույներով՝ դեղին, կանաչ, կապույտ, կարմիր, մանուշակագույն, նարնջագույն: 5. Բևեռափայլի աղեղները երբեմն անցնում են 5000 կմ-ից:

6. Երկրից բացի միակ այլ մոլորակը, որտեղ մինչ օրս նկատվել են բևեռափայլեր, Սատուրնն է:

**17. Ո՞ր միտքը** ***չի*** **բխում տեքստից կամ հակասում է նրա բովանդակությանը:**

*1) Բևեռափայլի կամարները կարող են ձգվել հազարավոր կիլոմետրեր:*
*2) Պատահել է, որ Հայաստանի տարածքում 2 տարում դիտվել է 4 բևեռափայլ:*
*3) Տիեզերքում միակ մոլորակները, որոնց վրա կարող են բևեռափայլեր տեղի ունենալ, Երկիրն ու Սատուրնն են:*
*4) Բևեռափայլերը կապված են Արեգակի ակտիվության հետ:*

**18. II հատվածի ո՞ր նախադասության մեջ կապ խոսքի մաս կա:**

*1) 2 2) 3 3) 4 4) 6*

**19. I հատվածի ո՞ր նախադասության մեջ վերաբերական կա:**

*1) 3 2) 4 3) 5 4) 6*

**20. I հատվածի ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ կա:**

*1) 1 2) 3 3) 5 4) 6*

**21. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ չկա:**

*1) I. 4 2) I. 5 3) II. 1 4) II. 6*

**22. Ո՞րն է պարզ նախադասություն:**

*1) I. 1 2) I. 2 3) II. 2 4) II. 4*

**23. Տրված նախադասության մեջ ընդգծված բառը ի՞նչ պաշտոն է կատարում:**

*Հասնելով երկրի մթնոլորտի վերին շերտերը՝ այդ մասնիկները բախվում են օդի* ***մոլեկուլներին:***

*1) տեղի պարագա*
*2) հանգման անուղղակի խնդիր*
*3) ուղիղ խնդիր*
*4) ձևի պարագա*

**24. Նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ սխալ կա:**

Արեգակի հսկայական շիկացած գունդը տիեզերական տարածություն է ճառագայթում վիթխարի քանակությամբ ջերմություն:

*1)* ***Արեգակի*** *– հատուկ գոյական*
*2)* ***շիկացած*** *– ածական*
*3)* ***ճառագայթում է*** *– բայ, սահմանական եղանակ*
*4)* ***ջերմություն*** *– գոյական, անորոշ առում*

**25.Գրի՛ր մեկ բան, ինչին կարող են նմանվել բևեռափայլերը:**

*Պատասխան՝* ________________________________

**26. I հատվածից դո՛ւրս գրիր մեկ բառ, որում երկհնչյունի հնչյունափոխություն կա:**

*Պատասխան՝* ________________________________

**27. I հատվածից դո՛ւրս գրիր փոխաբերական իմաստով գործածված մեկ բառ:**

*Պատասխան՝* ________________________________

**28. Տեքստից դո՛ւրս գրիր գերադրական աստիճանով դրված ածականը:**

*Պատասխան՝* ________________________________

**29. II հատվածից դո՛ւրս գրիր բազմապատկական բայը:**

*Պատասխան՝* ________________________________

**30. I. 1 նախադասությունից դո՛ւրս գրիր մակբայը:**

*Պատասխան՝* ________________________________

**31. 80 թիվը գրի՛ր տառերով:**

*Պատասխան՝* ________________________________

**32. Գրի՛ր I հատվածի այն նախադասության համարը, որում ստորոգյալի լրիվ զեղչում կա:**

*Պատասխան՝* ________________________________

9-րդ դասարան

# Մաթեմատիկա. ավարտական քննական աշխատանքի կառուցվածքն ու գնահատման չափանիշները

*«Մաթեմատիկա»* առարկայի 2022-2023 ուստարվա հիմնական դպրոցի ավարտական քննական աշխատանքը բաղկացած է **35** առաջադրանքներից:

***1 - 18 առաջադրանքներն*** ընտրովի պատասխանով առաջադրանքներ են, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրով նախատեսված նվազագույն պահանջներին և նպատակաուղղված են աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Աշակերտը պետք է ճիշտ պատասխանը նշի ձևաթղթի համապատասխան վանդակում՝ «**X**» նշումով:

***19 - 35 առաջադրանքները*** կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ստացած գիտելիքների կիրառման միջոցով ստուգել աշակերտի՝ ծանոթ կամ փոքր-ինչ փոփոխված իրավիճակում գիտելիքների օգտագործման կարողությունները: Կարճ պատասխան պահանջող յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը, առանց չափման միավորի աշակերտը անցկացնում է ձևաթղթի համապատասխան մաս:

*Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու չորս հնարավորություն, երկուսը՝ ընտրովի, երկուսը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:*

***1 - 35 առաջադրանքներից*** յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է **1** միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Ընտրովի եւ կարճ պատասխանով առաջադրանքների՝ պատասխանների ձեւաթղթում ջնջումների համար ***միավոր չի տրվում:***

Թեստ գրքույկը եւ պատասխանների ձեւաթուղթը լրացվում են **կապույտ գրիչով**, իսկ ստուգումը կատարվում է **կարմիր գրիչով**: Ստուգող ուսուցիչը, մինչեւ ստուգման գործընթացը սկսելը, «Z» նշան է դնում աշակերտի կողմից չլրացված վանդակներում:

**Ամփոփիչ վերջնական գնահատականը** որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է գնահատման 20 միավորանոց համակարգին՝ համաձայն սանդղակի:

| Միավորներ | Գնահատական | Միավորներ | Գնահատական |
|---|---|---|---|
| 0-1 | 1 | 15-17 | 11 |
| 2 | 2 | 18-20 | 12 |
| 3 | 3 | 21-22 | 13 |
| 4 | 4 | 23-24 | 14 |
| 5 | 5 | 25-26 | 15 |
| 6 | 6 | 27-28 | 16 |
| 7-8 | 7 | 29-30 | 17 |
| 9-10 | 8 | 31-32 | 18 |
| 11-12 | 9 | 33-34 | 19 |
| 13-14 | 10 | 35 | 20 |

Քննական աշխատանքին տրվող առավելագույն միավորը **35** է:

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

# Հիմնական դպրոցի Հայ գրականության ավարտական բանավոր քննության ուղեցույց

## Ավարտական քննության հարցատոմսի կառուցվածքը

Հայ գրականության հարցատոմսերը կազմվում են՝ ըստ ստորեւ ներկայացրած հարցաշարի: Հարցաշարը կազմված է 7-9-րդ դասարանների գրականության ծրագրերի եւ դասագրքերի նյութերի հիման վրա, որոնք հարցաշարում ընդգրկված են ընտրողաբար: Ընտրության համար հիմք է ծառայել նախորդ տարիների՝ 9-րդ դասարանի հայոց լեզվի եւ հայ գրականության քննական թեստի ուղեցույցում տրված գրականության ցանկը: Հարցատոմսը պարունակում է **4 հարց**, ընդ որում՝

-***1-ին հարցը*** *վերաբերում է հայ հին, միջնադարյան գրականությանը կամ հայ նոր գրականության սկզբնավորման փուլին, մասնավորապես՝ հետեւյալ գրողներին՝ Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան,*

- ***2-րդ*** *եւ* ***3-րդ հարցերը*** *վերաբերում են հայ նոր եւ նորագույն գրականությանը՝ հետեւյալ բաշխումով. հարցերից մեկը պիտի լինի չափածոյից, մյուսը՝ արձակից կամ դրամատուրգիայից,*

- ***4-րդ հարցը*** *վերաբերում է նորագույն շրջանի (արդի) գրականությանը՝ Հովհաննես Շիրազ, Համո Սահյան, Հրանտ Մաթեւոսյան, Վիլյամ Սարոյան:*

## Ցուցումներ.

*• Հարցատոմսերի կազմման համար անհրաժեշտ է կարեւորել տարբեր դասարանների նյութերի ընդգրկվածությունը. յուրաքանչյուր հարցատոմս ըստ հնարավորին պետք է պարունակի հարցեր բոլոր երեք (7-րդ, 8-րդ եւ 9-րդ) դասարանների նյութերից:*

*• Չափածոյի վերաբերյալ հարցերը հարցատոմսում չպիտի լինեն 2-ից ավելին:*

*• Ցանկալի չէ երկու արեւմտահայ գրողի ներառումը մեկ հարցատոմսում:*

*• Ցանկալի չէ անգիր իմանալու համար նախատեսված երկու ստեղծագործության ներառումը մեկ հարցատոմսում:*

## Գնահատման չափանիշները

Աշակերտի պատասխանը գնահատվում է առավելագույնը **20 միավորով**՝ 5-ական միավոր յուրաքանչյուր հարցի համար:

Յուրաքանչյուր հարցի պատասխանին տրվում է՝

- ***5 միավոր***՝ *լիարժեք պատասխանի՝ նյութը ամբողջական, առանց սխալների եւ վերլուծաբար ներկայացնելու դեպքում,*
- ***4 միավոր***՝ *թերություններով կամ ոչ էական սխալներով պատասխանի դեպքում,*
- ***3 միավոր***՝ *մի քանի բացթողում կամ սխալներ թույլ տալու դեպքում,*
- ***2 միավոր***՝ *նյութը միայն մասնակիորեն ներկայացնելու դեպքում,*
- ***1 միավոր***՝ *նյութի մասին սոսկ ընդհանուր պատկերացում ունենալու դեպքում,*
- ***0 միավոր***՝ *պատասխանի բացակայության դեպքում:*

## Հայ գրականության հարցատոմսի նմուշ

***1.*** *Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրերի գյուտը*

***2.*** *Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Լճակ»* բանաստեղծությունը*

***3.*** *Ավետիք Իսահակյան. «Սաադիի վերջին գարունը». բովանդակությունը, գաղափարը*

***4.*** *Հրանտ Մաթեւոսյան. «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը:*

## Հայ գրականության ավարտական քննության հարցաշար
### (աստղանիշով նշված են անգիր սովորելու համար հանձնարարվող ստեղծագործությունները)

1. Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրերի գյուտը
2. Հայ գրերի գյուտի նախապայմանները
3. Ոսկեդարի հայ պատմիչները, նրանց ստեղծագործությունները, դրանցում պատկերված ժամանակաշրջանները
4. Փավստոս Բուզանդ. աշխատությունը, «Արշակ եւ Շապուհ» հատվածը
5. *«Հայկ եւ Բել»* առասպելի բովանդակությունը
6. Հայկի եւ Բելի կերպարների համեմատական բնութագիրը՝ ըստ Մովսես Խորենացու
7. *«Արա Գեղեցիկ եւ Շամիրամ»* առասպելի բովանդակությունը
8. Արա Գեղեցիկի եւ Շամիրամի կերպարները՝ ըստ Մովսես Խորենացու
9. *«Արտաշես եւ Սաթենիկ»* առասպելի բովանդակությունը
10. *«Արտաշես եւ Արտավազդ»* առասպելի բովանդակությունը
11. *«Սասունցի Դավիթ»* էպոսի համառոտ բովանդակությունը
12. *«Սասունցի Դավիթ»* էպոսի գլխավոր կերպարները
13. *«Սասունցի Դավիթ»* էպոսի եւ Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի համեմատական բնութագիրը
14. Դավիթի եւ Մելիքի կերպարները *«Սասունցի Դավիթ»* էպոսում
15. Գրիգոր Նարեկացի. ստեղծագործությունը
16. Գրիգոր Նարեկացի. *«Մեղեդի ծննդյան»*
17. Նահապետ Քուչակի ստեղծագործությունը. *«Երբ սերն ի աշխարհս եկավ»* հայրենը
18. Նահապետ Քուչակի ստեղծագործությունը. *«Ես աչք ու դու լոյս, հոգի՛»** հայրենը
19. Սայաթ-Նովայի կյանքը եւ ստեղծագործությունը. տաղը՝ որպես բանաստեղծական կայուն ձեւ
20. Սայաթ-Նովայի *«Աշխարումս ախ չիմ քաշի»* տաղը
21. Խաչատուր Աբովյանի կյանքը եւ ստեղծագործությունը
22. Խաչատուր Աբովյանի *«Վերք Հայաստանի»* վեպի *«Յառաջաբանը»*
23. Խաչատուր Աբովյանը՝ որպես հայ նոր գրականության հիմնադիր
24. Միքայել Նալբանդյանի *«Իտալացի աղջկա երգը»* բանաստեղծությունը
25. Միքայել Նալբանդյանի *«Ազատություն»** բանաստեղծությունը
26. Ռաֆայել Պատկանյանի *«Օրորոցի երգ»** բանաստեղծությունը
27. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Սիրել»* բանաստեղծությունը
28. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Լճակ»** բանաստեղծությունը
29. Գաբրիել Սունդուկյան. *«Պեպո».* բովանդակությունը, գաղափարը ՝ ըստ դասագրքի հատվածի
30. Պեպոյի եւ Զիմզիմովի կերպարները Գաբրիել Սունդուկյանի *«Պեպո»* պիեսում՝ ըստ դասագրքի հատվածի
31. Եղիշե Չարենցի՝ Խաչատուր Աբովյանի եւ Միքայել Նալբանդյանի մասին ստեղծագործությունները

***շարունակությունը՝ էջ 11***

9-րդ դասարան

# Հիմնական դպրոցի Հայ գրականության ավարտական բանավոր քննության ուղեցույց

*սկիզբը՝ էջ 10*

32. Րաֆֆի. *«Խենթը»*. դասագրքի հատվածի բովանդակությունը, գաղափարը
33. Վարդանի կերպարը Րաֆֆու *«Խենթը»* վեպում՝ ըստ դասագրքի հատվածի
34. Մուրացանի *«Հասարակաց որդեգիրը»* պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
35. Հարուստների կերպարները Մուրացանի *«Հասարակաց որդեգիրը»* պատմվածքում
36. Լեւոնի կերպարը Շիրվանզադեի *«Արտիստը»* պատմվածքում
37. Շիրվանզադեի *«Արտիստը»* պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
38. Հովհաննես Թումանյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
39. Հովհաննես Թումանյանի *«Հայրենիքիս հետ»* բանաստեղծությունը
40. Հովհաննես Թումանյանի *«Փարվանա»* բալլադի բովանդակությունը, գաղափարը. գաղափար բալլադի մասին
41. Հովհաննես Թումանյանի *«Փարվանա»* բալլադը, արտասանել վերջին հատվածը
42. Հովհաննես Թումանյանի *«Թմկաբերդի առումը»* պոեմի բովանդակությունը, գաղափարը, նախերգանքը*
43. Հովհաննես Թումանյանի *«Թմկաբերդի առումը»* պոեմը, գաղափար պոեմի մասին, տեսակները
44. Հովհաննես Թումանյանի քառյակները, գաղափար քառյակի մասին, անգիր արտասանել 2 քառյակ՝ աշակերտի ընտրությամբ
45. Ավետիք Իսահակյան. *«Սաադիի վերջին գարունը»*. բովանդակությունը, գաղափարը
46. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Ռավեննայում»** բանաստեղծությունը
47. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Մի մրահոն աղջիկ տեսա»** բանաստեղծությունը
48. Նար-Դոսի *«Ես եւ նա»* պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
49. Անտոնիոյի կերպարը Նար-Դոսի *«Ես եւ նա»* պատմվածքում
50. Գրիգոր Զոհրապի *«Այրին»* նովելի կերպարները
51. Գրիգոր Զոհրապի *«Այրին»* նովելը. գաղափար նովելի մասին
52. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Աքասիաներու շուքին տակ»** բանաստեղծությունը
53. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Սիրերգ»** բանաստեղծությունը
54. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, գաղափար սոնետի մասին
55. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Երազ օրեր»** բանաստեղծությունը
56. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Տխրություն»** բանաստեղծությունը
57. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Իմ խաղաղ երեկոն է հիմա»** բանաստեղծությունը
58. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Մի՞թե վերջին պոետն եմ ես»** բանաստեղծությունը
59. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, *«Մի՛ խառնեք մեզ...»* բանաստեղծությունը
60. Եղիշե Չարենցի *«Տաղ անձնական»* բանաստեղծությունը
61. Եղիշե Չարենցի *«Ես իմ անուշ Հայաստանի»** բանաստեղծությունը
62. Դանիել Վարուժանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը. *«Ցորյանի ծովեր»* բանաստեղծությունը
63. Դանիել Վարուժան. *«Ջոն»** բանաստեղծությունը
64. Դերենիկ Դեմիրճյանի *«Ավելորդը»* պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
65. Հաճի աղայի եւ Սրբունի կերպարները Դերենիկ Դեմիրճյանի *«Ավելորդը»* պատմվածքում
66. Ակսել Բակունցի *«Սպիտակ ձին»* պատմվածքի կերպարները
67. Ակսել Բակունցի *«Սպիտակ ձին»* պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
68. Պարույր Սեւակի ստեղծագործությունը. *«Վարք մեծաց»* բանաստեղծությունը
69. Հովհաննես Շիրազ. *«Թագադրում»* բանաստեղծությունը
70. Հովհաննես Շիրազ. *«Հայ ժողովրդի երգը»* եւ *«Էքսպրոմտ»* բանաստեղծությունները
71. Համո Սահյանի ստեղծագործությունը. *«Անունդ տալիս»* բանաստեղծությունը
72. Համո Սահյանի ստեղծագործությունը. *«Ուր որ նայում եմ»* բանաստեղծությունը
73. Համո Սահյանի ստեղծագործությունը. *«Իմ քարափներն ու ես»** բանաստեղծությունը
74. Հրանտ Մաթեւոսյան. *«Կանաչ դաշտը»* պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
75. Հրանտ Մաթեւոսյան. *«Կանաչ դաշտը»* պատմվածքի կառուցվածքը, մայր ձիու կերպարը
76. Վիլյամ Սարոյան. *«Իմ սիրտը լեռներում է»* պիեսի ընդհանուր բնութագիրը. գաղափար թատերգության մասին
77. Վիլյամ Սարոյան. *«Իմ սիրտը լեռներում է»* պիեսի կերպարները
78. Վիլյամ Սարոյան. *«Իմ սիրտը լեռներում է»* պիեսի բովանդակությունը, գաղափարը

## Հիմնական դպրոցի Հայ գրականության ավարտական բանավոր քննության հարցատոմսերի առաջարկվող տարբերակ

**Հարցատոմս 1**
1. Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը
2. Եղիշե Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծությունը
3. Գրիգոր Զոհրապի «Այրին» նովելը, գաղափար նովելի մասին
4. Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությունը

**Հարցատոմս 2**
1. Ոսկեդարի հայ պատմիչները
2. Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադը. արտասանել վերջին հատվածը
3. Գրիգոր Զոհրապի «Այրին» նովելի կերպարները
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունը

**Հարցատոմս 3**
1. «Հայկ և Բել» առասպելի բովանդակությունը
2. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Ռավեննայում»* բանաստեղծությունը
3. Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի բովանդակությունը
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Անունդ տալիս» բանաստեղծությունը

**Հարցատոմս 4**
1. «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելի բովանդակությունը
2. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, գաղափար սոնետի մասին
3. Անտոնիոյի կերպարը Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի բովանդակությունը

**Հարցատոմս 5**
1. «Արտաշես և Արտավազդ» առասպելը
2. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Երազ օրեր»* բանաստեղծությունը
3. Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի կերպարները
4. Հովհաննես Շիրազի «Թագադրում» բանաստեղծությունը

**Հարցատոմս 6**
1. «Սասունցի Դավիթ» էպոսի և Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի համեմատական բնութագիրը
2. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Տխրություն»* բանաստեղծությունը
3. Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունը

**Հարցատոմս 7**
1. «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր կերպարները
2. Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»* բանաստեղծությունը
3. Հովհաննես Թումանյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի բովանդակությունը

**Հարցատոմս 8**
1. Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը
2. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Լճակ»* բանաստեղծությունը
3. Հաճի աղայի և Սրբունի կերպարները Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում
4. Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի կառուցվածքը, մայր ձիու կերպարը

**Հարցատոմս 9**
1. Նահապետ Քուչակի ստեղծագործությունը, «Երբ սերն ի աշխարհս եկավ» հայրենը
2. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի՞թե վերջին պոետն եմ ես»* բանաստեղծությունը
3. Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բովանդակությունը
4. Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի կառուցվածքը, մայր ձիու կերպարը

**Հարցատոմս 10**
1. Սայաթ-Նովայի կյանքը և ստեղծագործությունը, տաղը՝ որպես բանաստեղծական կայուն ձև
2. Խաչատուր Աբովյանի և Միքայել Նալբանդյանի կերպարները Եղիշե Չարենցի ստեղծագործություններում
3. Խենթի կերպարը Րաֆֆու համանուն վեպում
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Իմ քարափներն ու ես»* բանաստեղծությունը

**Հարցատոմս 11**
1. Խաչատուր Աբովյանի կյանքը և ստեղծագործությունը
2. Դանիել Վարուժանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Ցորյանի ծովեր» բանաստեղծությունը
3. Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի բովանդակությունը
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի կերպարները

**Հարցատոմս 12**
1. Խաչատուր Աբովյանը՝ որպես հայ նոր գրականության հիմնադիր
2. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Իմ խաղաղ երեկոն է հիմա»* բանաստեղծությունը
3. Լևոնի կերպարը Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքում
4. Հովհաննես Շիրազի «Հայ ժողովրդի երգը» և «Էքսպրոմտ» բանաստեղծությունները

**Հարցատոմս 13**
1. Ռաֆայել Պատկանյանի «Օրորոցի երգ»* բանաստեղծությունը
2. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Սիրերգ»* բանաստեղծությունը
3. Րաֆֆու «Խենթը» վեպի բովանդակությունը
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի ընդհանուր բնութագիրը, գաղափար թատերգության մասին

*շարունակությունը՝ էջ 12*

9-րդ դասարան

# Հիմնական դպրոցի Հայ գրականության ավարտական բանավոր քննության ուղեցույց

*սկիզբը՝ էջ 11*

**Հարցատոմս 14**
1. Միքայել Նալբանդյանի «Ազատություն»* բանաստեղծությունը
2. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Ռավեննայում»* բանաստեղծությունը
3. Լևոնի կերպարը Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքում
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի ընդհանուր բնութագիրը. գաղափար թատերգության մասին

**Հարցատոմս 15**
1. Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը
2. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Երազ օրեր»* բանաստեղծությունը
3. Ավետիք Իսահակյանի «Սաադիի վերջին գարունը» ստեղծագործությունը
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի ընդհանուր բնութագիրը, գաղափար թատերգության մասին

**Հարցատոմս 16**
1. Հայ գրերի գյուտի նախապայմանները
2. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Լճակ»* բանաստեղծությունը
3. Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի կերպարները
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Անունդ տալիս» բանաստեղծությունը

**Հարցատոմս 17**
1. Փավստոս Բուզանդի պատմության «Արշակ և Շապուհ» հատվածը
2. Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»* բանստեղծությունը
3. Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի բովանդակությունը
4. Պարույր Սևակի ստեղծագործությունը, «Վարք մեծաց» բանաստեղծությունը

**Հարցատոմս 18**
1. «Արտաշես և Սաթենիկ» առասպելը
2. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի՛ խառնեք մեզ…» բանաստեղծությունը
3. Ավետիք Իսահակյանի «Սաադիի վերջին գարունը» ստեղծագործությունը
4. Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությունը

**Հարցատոմս 19**
1. Հայկի և Բելի կերպարների համեմատական բնութագիրը՝ ըստ Մովսես Խորենացու
2. Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը
3. Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի բովանդակությունը
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունը

**Հարցատոմս 20**
1. Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարները՝ ըստ Մովսես Խորենացու
2. Խաչատուր Աբովյանի և Միքայել Նալբանդյանի կերպարները Եղիշե Չարենցի ստեղծագործություններում
3. Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Անունդ տալիս» բանաստեղծությունը

**Հարցատոմս 21**
1. «Սասունցի Դավիթ» էպոսի համառոտ բովանդակությունը
2. Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի բովանդակությունը, գաղափար բալլադի մասին
3. Անտոնիոյի կերպարը Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում
4. Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությունը

**Հարցատոմս 22**
1. Գրիգոր Նարեկացու «Մեղեդի ծննդյան» տաղը
2. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Սիրել» բանաստեղծությունը
3. Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի բովանդակությունը
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի բովանդակությունը

**Հարցատոմս 23**
1. Դավիթի և Մելիքի կերպարները «Սասունցի Դավիթ» էպոսում
2. Հովհաննես Թումանյանի քառյակները, գաղափար քառյակի մասին, անգիր արտասանել 2 քառյակ (աշակերտի ընտրությամբ)
3. Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բովանդակությունը
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Իմ քարափներն ու ես»* բանաստեղծությունը

**Հարցատոմս 24**
1. Նահապետ Քուչակի ստեղծագործությունը, «Ես աչք ու դու լոյս, հոգի՛»* հայրենը
2. Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը, գաղափար պոեմի մասին, տեսակները
3. Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի բովանդակությունը
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի կերպարները

**Հարցատոմս 25**
1. Սայաթ-Նովայի «Աշխարումս ախ չիմ քաշի» տաղը
2. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Իմ խաղաղ երեկոն է հիմա»* բանաստեղծությունը
3. Պեպոյի և Զիմզիմովի կերպարները Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսում
4. Հրանտ Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի կառուցվածքը, մայր ձիու կերպարը

**Հարցատոմս 26**
1. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը»
2. Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադը, արտասանել վերջին հատվածը
3. Գրիգոր Զոհրապի «Այրին» նովելը, գաղափար նովելի մասին
4. Համո Սահյանի ստեղծագործությունը, «Իմ քարափներն ու ես»* բանաստեղծությունը

**Հարցատոմս 27**
1. Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը
2. Դանիել Վարուժանի «Ջոն»* բանաստեղծությունը
3. Հարուստների կերպարները Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքում
4. Հովհաննես Շիրազի «Թագադրում» բանաստեղծությունը

**Հարցատոմս 28**
1. Փավստոս Բուզանդի պատմության «Արշակ և Շապուհ» հատվածը
2. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Աքասիաներու շուքին տակ»* բանաստեղծությունը
3. Հարուստների կերպարները Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքում
4. Հովհաննես Շիրազի «Հայ ժողովրդի երգը» և «Էքսպրոմտ» բանաստեղծությունները

**Հարցատոմս 29**
1. «Սասունցի Դավիթ» էպոսի և Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի համեմատական բնութագիրը
2. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի մրահոն աղջիկ տեսա»* բանաստեղծությունը
3. Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի բովանդակությունը
4. Պարույր Սևակի ստեղծագործությունը, «Վարք մեծաց» բանաստեղծությունը

**Հարցատոմս 30**
1. Ռաֆայել Պատկանյանի «Օրորոցի երգ»* բանաստեղծությունը
2. Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը պոեմը», նախերգանքը*
3. Րաֆֆու «Խենթը» վեպի բովանդակությունը
4. Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի կերպարները

# Հիմնական դպրոցի Հայոց պատմության ավարտական բանավոր քննության ուղեցույց

## Հարցաշար

Ստորև ներկայացված են Հայոց պատմության 9-րդ դասարանի ավարտական բանավոր քննության հարցաշարերը՝ ըստ 6-9-րդ դասարանների Հայոց պատմության ծրագրի և գործածության մեջ գտնվող երկու դասագրքերի: Յուրաքանչյուր դպրոցում Հայոց պատմության հարցատոմսերը պետք է կազմվեն՝ հիմք ընդունելով ներկայացված երկու հարցաշարերից այն մեկը, որը համապատասխանում է տվյալ դպրոցում գործածվող դասագրքին:

Առաջին հարցաշարը կազմված է՝ ըստ ***«Զանգակ»*** հրատարակչության հրատարակած հետևյալ դասագրքերի՝

*1. Հայոց պատմություն 6, Աշոտ Մելքոնյան, Արտակ Մովսիսյան, Էդուարդ Դանիելյան, Երևան 2013 թ.,*

*2. Հայոց պատմություն 7, Աշոտ Մելքոնյան, Էդուարդ Դանիելյան, Գագիկ Հարությունյան, Հակոբ Մուրադյան, Երևան 2014 թ.,*

*3. Հայոց պատմություն 8, Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան, Արամ Նազարյան, Հակոբ Մուրադյան, Երևան 2013 թ.,*

*4. Հայոց պատմություն 9, Էդիկ Գևորգյան, Կարեն Խաչատրյան, Ամատունի Վիրաբյան, Երևան 2014 թ.:*

Երկրորդ հարցաշարը կազմված է՝ ըստ ***«Մանմար»*** հրատարակչության հրատարակած հետևյալ դասագրքերի՝

*1. Հայոց պատմություն 6, խմբագրությամբ Բ. Հ. Հարությունյանի, Երևան 2013 թ.,*

*2. Հայոց պատմություն 7, խմբագրությամբ Բ. Հ. Հարությունյանի և Պ. Հ. Հովհաննիսյանի, Երևան 2014 թ.,*

*3. Հայոց պատմություն 8, խմբագրությամբ Վ. Բարխուդարյանի, Երևան 2013 թ.,*

*4. Հայոց պատմություն 9, խմբագրությամբ Վ. Բարխուդարյանի, Երևան 2014 թ.:*

## Հարցատոմսի կառուցվածքը

Հարցատոմսը պետք է կազմված լինի չորս հարցից՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանից մեկ հարց.

- *1-ին հարց – հին և հնագույն շրջան*
- *2-րդ հարց – միջին դարեր,*
- *3-րդ հարց – նոր շրջան,*
- *4-րդ հարց – նորագույն շրջան:*

*Հարցատոմսերը կազմվում են դպրոցում՝ մեթոդմիավորման կողմից:*

## Գնահատման չափանիշները

Աշակերտի պատասխանը գնահատվում է առավելագույնը **20 միավորով**՝ 5-ական միավոր յուրաքանչյուր հարցի համար: Յուրաքանչյուր հարցի պատասխան գնահատվում է՝

- ***5 միավոր*** - *լիարժեք պատասխանի՝ նյութը ամբողջական, առանց սխալների և վերլուծաբար ներկայացնելու դեպքում,*
- ***4 միավոր*** - *թերություններով կամ ոչ էական սխալներով պատասխանի դեպքում,*
- ***3 միավոր*** - *մի քանի բացթողում կամ սխալ թույլ տալու դեպքում,*
- ***2 միավոր*** - *նյութը միայն մասնակիորեն ներկայացնելու դեպքում,*
- ***1 միավոր*** - *նյութի մասին սոսկ ընդհանուր պատկերացում ունենալու դեպքում,*
- ***0 միավոր*** - *պատասխանի բացակայության դեպքում:*

***շարունակությունը՝ էջ 13***

9-րդ դասարան

# Հիմնական դպրոցի Հայոց պատմության ավարտական բանավոր քննության ուղեցույց

*սկիզբը՝ էջ 12*

### Հայոց պատմության հարցատոմսի նմուշ

1. Արտաշես I-ի բարենորոգումները: Վարչական և ռազմական բարեփոխումները: Արտաշես I-ի մյուս բարեփոխումները: Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը:

2. Վարդանանց պատերազմը: Պարսից գերիշխանության սաստկացումը: Արտաշատի ժողովը: Ապստամբության ծավալումը: Ավարայրի ճակատամարտը և դրա նշանակությունը:

3. Հայկական հարցի միջազգայնացումը: Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և Հայկական հարցը: Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում:

4. Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920 – 1945 թթ.): Թատրոնը և կինոարվեստը: Կերպարվեստը և երաժշտությունը: Քաղաքաշինությունը և ճարտարապետությունը:

## Առաջին հարցաշար

### (Ըստ «Զանգակ» հրատարակչության դասագրքերի)

### Հին եւ Հնագույն շրջան

**1. Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք:**
«Հայրենիք» հասկացությունը: Հայկական լեռնաշխարհի դիրքն ու սահմանները: Լեռները:

**2. Հայկական լեռնաշխարհի լճերը, գետերը և բնակլիմայական պայմանները:**
Լճերը: Գետերը:

**3. Հայաստանի պատմավարչական բաժանումները:**
Հայաստանի վաղ շրջանի պատմավարչական բաժանումները:

**4. Հայերի ծագումը:**
Հայաստանը հնդեվրոպական նախահայրենիք: Հայաստանը Հին Արևելքի վեպերում և առասպելներում:

**5. Վաղ պետական կազմավորումները Հայաստանի տարածքում:**
Հայկական առաջին պետական կազմավորումը, Արատտա: Հայասա թագավորությունը: Նաիրի երկիրը: Հայկազունիների Արարատյան թագավորությունը:

**6. Վանի թագավորության հիմնադրումը: Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք:**
Վանի թագավորության հիմնադրումը: Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք:

**7. Թագավորության հզորացումը: Վանի աշխարհակալ տերությունը:**
Երկրի հզորացումը Մենուա արքայի օրոք: Արգիշտի I հզոր արքան:

**8. Հայկազունիների նոր թագավորությունը Ք.ա. VII-VI դարերում:**
Պարույր նահապետը՝ Հայոց թագավոր: Երվանդ I Սակավակյաց: Տիգրան I Երվանդյան:

**9. Հայկազունի Երվանդականների թագավորության վերականգնումը:**
Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը:

**10. Հայոց թագավորությունները Ք.ա. III դարում:**
Հայաստանը Ք.ա. IV դարի վերջին: Հայկական թագավորությունները և Սելևկյան տերությունը Ք.ա. III դարում:

**11. Արտաշեսյան թագավորության կազմավորումը:**
Հայկական թագավորությունների անկախացումը: Արտաշես I-ը և հայկական հողերի միավորումը:

**12. Արտաշես I-ի բարենորոգումները:**
Վարչական և ռազմական բարեփոխումները: Արտաշես I-ի մյուս բարեփոխումները: Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը:

**13. Տիգրան II-ի գահակալումը: Մեծ Հայքի ամբողջականության վերականգնումը:**
Տիգրան II-ի գահակալումը: Ծոփքի վերամիավորումը:

**14. Տիգրան II Մեծի տերության ստեղծումը: Հայկական աշխարհակալության ընդլայնումը:**
Հայ-պոնտական դաշինքը և Կապադովկիայի նվաճումը: Հայ-պարթևական պատերազմը: Սելևկյան պետության միացումը:

**15. Տիգրան Մեծի տերությունը:**
Տիգրան Մեծի հիմնած բնակավայրերը: Տիգրան Մեծը ժամանակակիցների գնահատմամբ:

**16. Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II-ի օրոք:**
Կրասոսի արշավանքը: Հռոմեական նոր արշավանքը:

**17. Տրդատ I-ի գահակալումը:** Հայ-պարթևական դաշինքն ընդդեմ Հռոմեական կայսրության:

**18. Մեծ Հայքը I դարի վերջից մինչև III դարի սկիզբը**:
Սանատրուկ II: Վաղարշ I: Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը:

**19. Տրդատ III–ի գահակալությունը**:
Տրդատ արքայազնի և Գրիգոր Պարթևի վերադարձը:

**20. Հայկական մշակույթի ակունքները: Հայկական առասպելները:** Հայկական առասպելները:

**21. Հայկական վիպերգերը:** Վիպերգեր:

**22. Հայոց նախաքրիստոնեական հավատքը:**
Հայկական պետությունների դիցարանները:

### Միջին դարեր

**23. Ավատատիրության ձևավորումը Հայաստանում:**
Հողատիրության ձևերը: Հասարակության դասերը, աստիճանակարգությունը:

**24. Պետական կառավարման համակարգը:**
Թագավորը և արքունի գործակալությունները: Բանակը:

**25. Քրիստոնեության ընդունումը՝ որպես պետական կրոն:**
Տրդատ III Մեծ և Գրիգոր Լուսավորիչ: Քրիստոնեության՝ պետականորեն ընդունման պատմական նշանակությունը:

**26. Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար:**
Արշակ II-ի քաղաքականությունը: Հայկական զորքերի հաղթանակները:

**27. Պայքար պարսից զավթողական քաղաքականության դեմ:**
Պայքար պարսից զավթողական քաղաքականության դեմ: Պապ թագավոր:

**28 Վարդանանց պատերազմը:**
Պարսից գերիշխանության սաստկացումը: Արտաշատի ժողովը: Ապստամբության ծավալումը:Ավարայրի ճակատամարտը և դրա նշանակությունը:

**29. Վահանանց ապստամբությունը:**
Վահանանց ապստամբությունը: Նվարսակի պայմանագիրը:

**30. Արաբական արշավանքները և Հայաստանը:**
Հայաստանը և արաբական ներխուժումները: Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունը:

**31. Հայաստանի ինքնավարության վերականգնումը:**
Խալիֆայության գերիշխանության վերացման ընթացքը Հայաստանում: 850-855 թթ. ապստամբությունը:

**32. Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը:**
Հայ գրերի գյուտը: Գրերի գյուտի նշանակությունը:

**33. Ոսկեդարյան գրականությունը:**
Պատմագրություն: Փիլիսոփայություն: Բնական գիտություններ:

**34. Հայաստանի անկախության վերականգնումը:**
Անկախության վերականգնման գործընթացը: Թագավորության հռչակումը:

**35. Պայքարը արաբների դեմ:**
Արաբների դեմ պայքարի հաղթական ավարտը: Աշոտ II Երկաթ:

**36. Բագրատունյաց Հայաստանի վերելքը:**
Հայոց թագավորության վերելքը: Թագավորությունը հզորության գագաթնակետին: Գագիկ I:

**37. Հայ ժողովրդի պայքարն օտար նվաճողների դեմ: Զաքարյաններ:**
Սելջուկների դեմ պայքարի նոր փուլը: Զաքարյանների իշխանությունը:

**38. Հայկական պետության ստեղծումը Կիլիկիայում:**
Հայերը Կիլիկիայում: Ռուբինյան իշխանության առաջացումը:

**39. Հայոց թագավորության վերականգնումը:**
Լևոն II-ի իշխանության շրջանը: Լևոն Մեծագործի քաղաքականությունը:

**40. Կիլիկյան Հայաստանի պետական կարգը:**
Արքունիքը և բանակը:

**41. Հայկական մշակույթը X-XIV դարերում:**
Դպրոցները և համալսարանները: Պատմագրությունը:

**42. Հայկական մշակույթը X-XIV դարերում:**
Գրականությունը: Ճարտարապետությունը: Նկարչությունը:

**43. Հայաստանի ազատագրության համար պայքարը:**
Հայկական իշխանությունները ուշ միջնադարում: Հայաստանի ազատագրության համար պայքարը:

**44. Հայկական մշակույթը (XV դար -XVII դարի առաջին կես):**
Դպրոցը: Տպագրությունը. Հակոբ Մեղապարտ:

### Նոր շրջան

**45. Ազատագրական պայքարի նոր փուլը:**
Էջմիածնի 1677 թ. ժողովը: Իսրայել Օրին և նրա գործունեությունը:

**46. Ազատագրական զինված պայքարը Արցախում:**
Պայքարի սկիզբը Արցախում: Զինված պայքարը Արցախում:

**47. Ազատագրական զինված պայքարը Սյունիքում:**
Ազատագրական պայքարի սկիզբը Սյունիքում: Դավիթ Բեկ: Հայկական իշխանությունների ստեղծումը: Հալիձորի հաղթանակը: Մխիթար Սպարապետ:

**48. Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները:**
Հովսեփ Էմինի գործունեությունը: Մադրասի հայրենասիրական խմբակը:

**49. 1826 -1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը:**
1826 -1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը: Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը: Պարսկահայերի վերաբնակեցումը:

**50. Հայկական մարզը: 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:**
Հայկական մարզի կազմակերպումը: 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:

**51. Հայկական մշակույթը XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի առաջին կեսը:**
Դպրոցը: Տպագրությունը: Հայ մամուլի սկզբնավորումը:

**52. Հայկական մշակույթը XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի առաջին կեսը:** Պատմագիտությունը: Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Արվեստը:

**53. Հայ հասարակական քաղաքական միտքը:**
Հայկական պահպանողականությունը: Ազատականությունը հայ իրականության մեջ: Հայ ազգայնականությունը:

**54. Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:** Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:

**55. Ռուս-թուրքական 1877 -1878 թթ. պատերազմը:**
Ռուս-թուրքական պատերազմի սկիզբը: Բայազետի պաշտպանությունը: Հայերի մասնակցությունը պատերազմին: Պատերազմի ավարտը:

**56. Հայկական հարցի միջազգայնացումը:**
Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և Հայկական հարցը: Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում:

**57. Հայ ազգային կուսակցությունները:**
Արմենական կուսակցություն: Հնչակյան կուսակցություն: Հայ հեղափոխական դաշնակցություն:

**58. Հայդուկային շարժումը:**
Հայդուկային շարժման սկիզբը: Նշանավոր հայդուկապետերը:

**59. Ազատագրական շարժումների ծավալումը XX դարի սկզբին:**
Նոր մարտավարության ընդունումը: Ս.Առաքելոց վանքի կռիվը: Սասունի 1904 թ. ապստամբությունը:

**60. Հայ-թաթարական կռիվները:**
Հայ-թաթարական ազգամիջյան բախումը: Հայերի ինքնապաշտպանության կազմակերպումը:

**61. Հայկական հարցը 1912 -1914 թթ.:**
Հայկական հարցը 1912 -1914 թթ.:

**62. Հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին:**
Հայաստանը և Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերը: Կամավորական ջոկատների ստեղծումը:

**63. Հայոց Մեծ եղեռնը:**
Հայերի ցեղասպանության երիտթուրքական պետական ծրագիրը: Մեծ եղեռնը:

**64. Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին:**
Վանի փառապանծ հաղթանակը: «Մուսա լեռան քառասուն օրը»:

*շարունակությունը՝ էջ 14*

9-րդ դասարան

# Հիմնական դպրոցի Հայոց պատմության ավարտական բանավոր քննության ուղեցույց

*սկիզբը՝ էջ 13*

**65. Արևմտահայերի և արևելահայերի առաջին համագումարները:**

Արևմտահայերի ազգային խորհուրդը: Արևմտահայաստանի վերածննդի սկիզբը: Հայոց ազգային խորհրդի ստեղծումը:

**66. Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը:**

«Թուրքահայաստանի մասին» հրովարտակը: Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և Հայկական հարցը:

**67. Մայիսյան հերոսամարտերը:**

Պատերազմի վերաճումը թուրք-հայկականի: Սարդարապատի և Բաշ-Ապարանի ճակատամարտերը:

**68. Մայիսյան հերոսամարտերը:**

Ղարաքիլիսայի ճակատամարտերը: Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը:

**69. Հայկական մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:**

Կրթական համակարգը: Հայագիտությունը:

**70. Հայկական մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:**

Կերպարվեստը: Թատրոնը: Երաժշտությունը:

**71. Հայկական գաղթավայրերը նոր շրջանում:**

Գաղթավայրերի առաջացումը: Խոշոր գաղթավայրերը:

## Նորագույն շրջան

**72. Հայոց անկախ պետության կայացումը:**

Անկախության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Հայկական պետության կերտումը:

**73. Ներքին կայունությանը սպառնացող վտանգները**

Թուրք-թաթարական խռովությունները: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը:

**74. Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը 1918 -1920 թթ.:**

Արտաքին հարաբերությունները և դիվանագիտական կապերը: Հայ-վրացական հարաբերությունները: Հայ-ադրբեջանական հարաբերությունները:

**75. Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում:**

Հայկական պատվիրակությունները Փարիզի խորհրդաժողովում: Միացյալ Հայաստանի հռչակումը: Հայկական հարցը Սան Ռեմոյի խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը:

**76. Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում:**

Հայ–ռուսական հարաբերությունները: Քեմալական շարժումը և Հայաստանը: Քեմալ-բոլշևիկյան համագործակցությունը:

**77. 1920 թ. թուրք–հայկական պատերազմը:**

Թուրք–հայկական պատերազմը: Հայաստանի խորհրդայնացումը:

**78. Խորհրդային վարչակարգի հաստատումը:**

Իշխանության նոր մարմինների ստեղծումը: Փետրվարյան ապստամբությունը:

**79. Խորհրդային Հայաստանը Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմում:**

ՀԽՍՀ առաջին Սահմանադրության ընդունումը: Հայաստանը Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմավորման գործընթացում:

**80. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920 -1922 թթ.):**

«Լոռու չեզոք գոտու» և Ջավախքի հիմնախնդիրները: Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հիմնախնդիրները:

**81. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920 -1922 թթ.):**

Հայկական տարածքային հարցը Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերում:

**82. Տնտեսության վերականգնումը և զարգացումը:**

Արդյունաբերացումը: Գյուղատնտեսության կոլեկտիվացումը:

**83. Քաղաքական բռնությունները և հալածանքները:**

Կոմունիստական ամբողջատիրության հաստատումը: Քաղաքական բռնաճնշումների նոր փուլը:

**84. Հայկական սփյուռքի ձևավորումը:**

Սփյուռքի առաջացումը: Հայկական հարցը Լոնդոնի և Լոզանի խորհրդաժողովներում:

**85. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:**

Պատերազմի սկիզբը: Հայերի մասնակցությունը պատերազմին: Հայկական ազգային դիվիզիաները: Խորհրդային Միության հայ հերոսները և զորավարները:

**86. Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920 – 1945 թթ.):**

Անգրագիտության վերացումը: Խորհրդային դպրոցի ձևավորումը:

**87. Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920 – 1945 թթ.):**

ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի հիմնադրումը և ՀԽՍՀ ԳԱ ստեղծումը: Բնական գիտությունների և հայագիտության զարգացումը:

**88. Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920 – 1945 թթ.):**

Թատրոնը և կինոարվեստը: Կերպարվեստը և երաժշտությունը: Քաղաքաշինությունը ևճարտարապետությունը:

**89. Հայկական հարցի վերաբացումը:**

Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում:

**90. Մեծ հայրենադարձությունը:**

1946 – 1948 թթ. մեծ հայրենադարձությունը:

**91. Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը:**

Հայաստանը խրուշչովյան «ձնհալի տարիներին»: Ազգային զարթոնքը: Այլախոհությունը:

**92. Արցախյան շարժման սկիզբը:**

Արցախյան շարժման սկզբնավորումը: ՀԽՍՀ և ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշումը: Սումգաիթյան ոդբերգությունը:

**93. Համազգային շարժման վերելքը:**

Համազգային շարժման ծավալումը:

**94. Ազատագրական պայքարի զինված փուլը:**

Ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը և Հայաստանի սահմանների պաշտպանությունը: Ազատագրական պայքարի զինված փուլը:

**95. Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը:**

Հայաստանի անկախության մասին հռչակագիրը: ԽՍՀՄ-ի փլուզումը, ԱՊՀ-ի ստեղծումը:

**96. Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը:**

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: Իշխանության մարմինների ձևավորումը: Բանակը: ՀՀ սահմանադրությունը:

**97. ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը:**

ՀՀ միջազգային ճանաչումը: Արտաքին քաղաքականությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:

# Երկրորդ հարցաշար

**(Ըստ «Մանմար» հրատարակչության դասագրքերի)**

## Հին եւ հնագույն շրջան

**1. Հայոց հայրենիքը:**

Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք: Հայկական լեռնաշխարհի դիրքը, սահմանները:

**2. Հայոց հայրենիքը:**

Հայկական լեռնաշխարհի գետերը, լճերը:

**3. Հայոց հայրենիքը:**

Հայաստանի պատմավարչական բաժանումը:

**4. Հայաստանը հնդեվրոպական նախահայրենիք:**

Հնդեվրոպական նախահայրենիքը: Հայ ժողովրդի կազմավորման մասին ավանդազրույցները:

**5. Վաղ պետական կազմավորումների առաջացումը:**

Արատտա, Հայասա, Թեգարամա, Հայկյաններ:

**6. Վանի համահայկական թագավորությունը:**

Վանի թագավորության հիմնադրումը Ք.ա. IX դարում: Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք:

**7. Վանի համահայկական թագավորությունը**

Վանի թագավորության հզորացումը (Մենուա, Արգիշտի I):

**8. Երվանդունիների թագավորության հիմնադրումը:**

Պարույր նահապետը՝ Հայոց թագավոր: Երվանդ I Սակավակյաց: Տիգրան Երվանդյան:

**9. Երվանդականների թագավորությունը Ք.ա. IV-III դարերում:**

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը:

**10. Երվանդականների թագավորությունը Ք.ա. IV-III դարերում:**

Հայկական թագավորությունները Ք.ա. III դարում: Հայկական թագավորությունները և Սելևկյանները:

**11. Հայկական թագավորությունների անկախացումը:**

Արտաշես I-ի գահակալումը: Հայկական հողերի միավորումը:

**12. Արտաշես I-ի բարենորոգումները:**

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը: Հողային հարաբերությունների կարգավորումը: Այլ բարենորոգումներ:

**13. Տիգրան II Մեծը և Հայկական տերության ստեղծումը:**

Տիգրան II-ի գահակալությունը: Կապադովկիայի ռազմակալումը:

**14. Տիգրան II Մեծը և Հայկական տերության ստեղծումը:**

Տիգրան II Մեծի նվաճումները:

**15. Տերության տարածքը և բնակչությունը:**

Տիգրանակերտի կառուցումը:

**16. Մեծ Հայքի թագավորությունն Արտավազդ II-ի օրոք:**

Արտավազդ II-ի գահակալությունը: Կրասոսի արևելյան արշավանքը և Հայաստանը:

**17. Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանում:**

Տրդատ I-ի գահակալումը և գործունեությունը:

**18. Հայաստանը II-III դարերում:**

Վաղարշ I: Վաղարշապատ մայրաքաղաքի կառուցումը: Վաղարշ II-ը և Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը:

**19. Հայաստանը II-III դարերում:**

Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և հայ-պարսկական հարաբերությունները:

**20. Հոգևոր մշակույթը:**

Առասպելները:

**21. Հոգևոր մշակույթը:**

Վիպերգերը:

**22. Հոգևոր մշակույթը:**

Դիցարանը:

## Միջին դարեր

**23. Ավատատիրության ձևավորումը Հայաստանում:**

Հողատիրության ձևերը: Ավատատիրական աստիճանակարգությունը:

**24. Պետական կառավարման համակարգը:**

Պետական կարգը: Բանակը:

**25. Քրիստոնեության ընդունումը՝ որպես պետական կրոն:**

Տրդատ III Մեծ և Գրիգոր Լուսավորիչ: Քրիստոնեությունը՝ պետական կրոն:

**26. Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար:**

Արշակ II:

**27. Պայքար պարսից զավթողական քաղաքականության դեմ:**

Պապ թագավորը և Մեծ Հայքի թագավորության հզորության վերականգնման նրա փորձերը:

**28. Վարդանանց պատերազմը:**

Կրոնափոխության առաջարկը: Արտաշատի ժողովը: Շարժման ծավալումը: Ավարայրի ճակատամարտը:

**29. Վահանանց ապստամբությունը:**

Ապստամբության սկիզբը: Ակոռիի, Ներսեհապատի և Ճարմանայի ճակատամարտերը: Նվարսակի պայմանագիրը:

**30. Արաբական արշավանքները և Հայաստանը:**

Արաբական արշավանքները և Հայաստանը: Հայ-արաբական պայմանագիրը:

**31. Հայաստանի ինքնավարության վերականգնումը:**

Հայաստանի ինքնավարության վերականգնումը: 850 - 855 թթ. ապստամբությունը:

*շարունակությունը՝ էջ 15*

9-րդ դասարան

# Հիմնական դպրոցի Հայոց պատմության ավարտական բանավոր քննության ուղեցույց

*սկիզբը՝ էջ 14*

**32. Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը:**
Մեսրոպ Մաշտոցը և հայոց այբուբենի ստեղծումը:
**33. Ոսկեդարյան գրականությունը:**
Պատմագրությունը: Փիլիսոփայությունը և բնական գիտությունները:
**34. Հայաստանի անկախության վերականգնումը:**
Բագրատունյաց թագավորության հաստատումը: Աշոտ I:
**35. Պայքարը արաբների դեմ:**
Երկրի անկախության ամրապնդումը: Աշոտ II Երկաթ:
**36. Բագրատունյաց Հայաստանի վերելքը:**
Հայաստանն Աբասի և Աշոտ III-ի թագավորության շրջանում: Սմբատ II թագավորը: Բագրատունյաց թագավորության հզորացումը Գագիկ I-ի օրոք:
**37. Հայ ժողովրդի պայքարն օտար նվաճողների դեմ: Զաքարյաններ:**
Հայ-վրացական զինակցության սկզբնավորումը: Հյուսիսային Հայաստանի ազատագրումը:
**38. Հայկական պետության ստեղծումը Կիլիկիայում:**
Հայերը Կիլիկիայում: Ռուբինյանների հաստատվելը Կիլիկիայում: Ռուբինյան իշխանության ընդարձակումը:
**39. Հայոց թագավորության վերականգնումը:**
Կիլիկյան Հայաստանի հզորացումը: Թագավորության հռչակումը: Ձեռնարկումներ ներքինկյանքում: Արտաքին քաղաքականությունը:
**40. Կիլիկյան Հայաստանի պետական կարգը:**
Պետական կառավարման համակարգը: Բանակը:
**41. Հայկական մշակույթը X-XIV դարերում:**
Կրթական գործը: Պատմագրությունը:
**42. Հայկական մշակույթը X-XIV դարերում:**
Գրականությունը: Ճարտարապետությունը: Որմնանկարչությունը: Մանրանկարչությունը:
**43. Հայաստանի ազատագրության համար պայքարը:**
Հայկական պետականության վերականգնման փորձ XV դարում: Հայ ազատագրական շարժումը XVI դարում:
**44. Հայկական մշակույթը (XV դար-XVII դարի առաջին կես):**
Դպրոցը: Տպագրությունը. Հակոբ Մեղապարտ:

## Նոր շրջան

**45. Ազատագրական պայքարի նոր փուլը:**
Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի պատվիրակությունը: Հայաստանի ազատագրության Իսրայել Օրու ծրագրերը:
**46. Ազատագրական զինված պայքարն Արցախում:**
Ռազմական ամրությունների կազմավորումն Արցախում: Ռուսական զորքերի՝ 1722 թ. կասպիական արշավանքը: Շարժման ծավալումը Արցախում:
**47. Ազատագրական զինված պայքարը Սյունիքում:**
Ազատագրական պայքարի սկիզբը Սյունիքում: Դավիթ-Բեկ: Սյունիքի հայկական իշխանության կազմավորումը: Մխիթար Սպարապետ: Ապստամբության ավարտը:
**48. Ազատագրական պայքարի գաղութահայ կենտրոնները:**
Հովսեփ Էմինի գործունեությունը: Մադրասի հայրենասիրական խմբակը:
**49. 1826 -1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը:**
Պատերազմի ընթացքը: Երևանի գրավումը: Թուրքմենչայի պայմանագիրը:
**50. Հայկական մարզը: 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:**
Հայաստանի իրավաքաղաքական դրությունը:
**51. Հայկական մշակույթը XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի առաջին կեսը:**
Դպրոցները: Մամուլը: Տպագրությունը:
**52. Հայկական մշակույթը XVII դարի երկրորդ կեսից մինչև XIX դարի առաջին կեսը:**
Մխիթարյան միաբանություն: Արվեստ:
**53. Հայ հասարակական քաղաքական միտքը:**
Պահպանողական հոսանք: Ազատամտական հոսանք:
**54. Զեյթունի 1862 թ. ապստամբությունը:**
Զեյթունի կիսանկախ վիճակը: Զեյթունի ինքնապաշտպանությունը:
**55. Ռուս-թուրքական 1877 -1878 թթ. պատերազմը:**
Պատերազմի պատճառները: Պատերազմի ընթացքը:
**56. Հայկական հարցի միջազգայնացումը:**
Սան Ստեֆանոյի պայմանագիրը: Հայկական հարցի առաջացումը:
**57. Հայ ազգային կուսակցությունները**
Արմենական կուսակցություն: Հնչակյան կուսակցություն: Հայ հեղափոխական դաշնակցություն:
**58. Հայդուկային շարժումը:**
Հայդուկային շարժումը:
**59. Ազատագրական շարժումների ծավալումը XX դարի սկզբին:**
Առաքելոց վանքի կռիվը: Սասունի ինքնապաշտպանությունը:
**60. Հայ-թաթարական կռիվները:**
Հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները:
**61. Հայկական հարցը 1912 -1914 թթ.:**
Հայկական հարցը 1912 -1914 թթ.: Հայկական բարենորոգումների խնդիրը և ռուս-թուրքական համաձայնագիրը:
**62. Հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտի տարիներին:**
Կամավորական շարժումը:
**63. Հայոց Մեծ եղեռնը:**
Հայերի ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը: Ցեղասպանության իրագործումը:
**64. Ինքնապաշտպանական հերոսամարտերը 1915 թվականին:**
Վանի ինքնապաշտպանությունը: Սուետիայի հայության գոյամարտը:
**65. Արևմտահայերի և արևելահայերի առաջին համագումարները:**
Արևմտահայերի և արևելահայերի առաջին համագումարները:
**66. Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը:**
«Թուրքահայաստանի մասին» հրովարտակը: Բրեստ-Լիտովսկի հաշտությունը և Տրապիզոնի բանակցությունները:
**67. Մայիսյան հերոսամարտերը:**
Թուրքական զորքերի ներխուժումը Արևելյան Հայաստան:
**68. Մայիսյան հերոսամարտերը:**
1918 թ. Մայիսյան հերոսամարտերը և դրանց պատմական նշանակությունը:
**69. Հայկական մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:**
Դպրոց: Գիտություն:
**70. Հայկական մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին:**
Թատրոն: Երաժշտություն: Կերպարվեստ:
**71. Հայկական գաղթավայրերը նոր շրջանում:**
Պարսկաստանի հայկական գաղութները: Հնդկաստանի հայկական գաղութները: Եգիպտոս:

## Նորագույն շրջան

**72. Հայոց անկախ պետության կայացումը:**
Հայաստանի Հանրապետության հռչակումը: Բաթումի պայմանագիրը: Իշխանության մարմինների ստեղծումը:
**73. Ներքին կայունությանը սպառնացող վտանգները:**
Թուրք-թաթարական խռովությունները: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը:
**74. Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը 1918 -1920 թթ.:**
Հանրապետության միջազգային դրությունը (1918): Հայ-վրացական հարաբերությունները: Հայ-ադրբեջանական հարաբերությունները:
**75. Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում:**
Հայկական պատվիրակությունները Փարիզի կոնֆերանսում: Սան Ռեմոյի խորհրդաժողովը: Սևրի պայմանագիրը:
**76. Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում:**
Հայ–ռուսական հարաբերությունները: Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում և դրանց ձախողումը: Քեմալական շարժումը և խորհրդա-թուրքական մերձեցումը:
**77. 1920 թ. թուրք–հայկական պատերազմը:**
Թուրք–հայկական պատերազմը: Ալեքսանդրապոլի պայմանագիրը: 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը:
**78. Խորհրդային վարչակարգի հաստատումը:**
Իշխանության մարմինների ստեղծումը: Փետրվարյան ապստամբությունը և քաղաքացիական կռիվները:
**79. Խորհրդային Հայաստանը Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմում:**
Հայաստանի առաջին Սահմանադրությունը: Անդրկովկասյան դաշնության և ԽՍՀՄ-ի կազմավորումը:
**80. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920-1922 թթ.):**
Լոռու և Ջավախքի խնդիրը: Նախիջևանի հիմնախնդիրը: Զանգեզուրի հերոսամարտը: (1920 թ.վերջ -1921 թ. հուլիս) Գարեգին Նժդեհ: Արցախի հիմնախնդիրը:
**81. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները (1920-1922 թթ.):**
Հայաստանի տարածքային պահանջները: Հայկական տարածքների հարցը 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերում:
**82. Տնտեսության վերականգնումը և զարգացումը:**
Ինդուստրացման գործընթացը: Գյուղատնտեսության կոլեկտիվացումը:
**83. Քաղաքական բռնությունները և հալածանքները:**
Կոմունիստական կուսակցության մենիշխանությունը: Քաղաքական բռնությունները:
**84. Հայկական սփյուռքի ձևավորումը:**
Հայկական սփյուռքի առաջացումը: Հայկական սփյուռքի ձևավորումը:
**85. Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին:**
Ֆաշիստական Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա: Հայկական դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին:
**86. Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920 – 1945 թթ.):**
Զանգվածային անգրագիտության վերացումը: Հանրակրթական դպրոցը:
**87. Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920 – 1945 թթ.):**
Գիտության զարգացումը:
**88. Խորհրդային Հայաստանի մշակույթը (1920 – 1945 թթ.):**
Կերպարվեստը: Երաժշտությունը: Թատրոնը և կինոն: Ճարտարապետությունը:
**89. Հայկական հարցի վերաբացումը:**
Հայկական հարցի վերաբացումը Երկրորդ աշխարհամարտից հետո:
**90. Մեծ հայրենադարձությունը:**
1946 – 1948 թթ. «մեծ ներգաղթը»:
**91. Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը:**
Անհատի պաշտամունքի դատապարտումը: Ազգային զարթոնքը: Խորհրդային Հայաստանը «լճացման տարիներին»:
**92. Արցախյան շարժման սկիզբը:**
Ղարաբաղյան ազատագրական շարժումը: Սումգաիթյան ողբերգությունը:
**93. Համազգային շարժման վերելքը:**
Ազատագրական շարժման վերելքը: Հայերի բռնագաղթեցումը Ադրբեջանից:
**94. Ազատագրական պայքարի զինված փուլը:**
Պատերազմական գործողությունների սանձազերծումը Ադրբեջանի կողմից:
**95. Հայաստանի Հանրապետության անկախության գործընթացը:**
Հայաստանի անկախության հռչակագիրը:
**96. Հայաստանի Հանրապետության ամրապնդման գործընթացը:**
Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: Սահմանադրության ընդունումը: Հայոց ազգային բանակը:
**97. ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը:**
Նորանկախ հանրապետության միջազգային ճանաչումը: Հայաստանի արտաքին քաղաքականությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը:



9-րդ դասարան

# Ֆիզիկա. ավարտական քննության ուղեցույց

Ուղեցույցի նպատակն է՝ օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2022-2023 ուստարվա 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու *«Ֆիզիկա»* առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստը կազմվում է՝ հանրակրթական հիմնական դպրոցի *«Ֆիզիկա»* առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան, գործածվող դասագրքերի հիման վրա:

### 1. Առաջադրանքների բաշխումը՝ ըստ ներկայացման ձևի

Թեստի առաջադրանքները ներկայացված են երեք ձևով՝ ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխան պահանջող:

| Ներկայացման ձևը | Առաջադրանքի համարը | Ընդհանուր միավորը |
|---|---|---|
| Ընտրովի պատասխանով | 1-22 | 22 |
| Կարճ պատասխանով | 23-26 | 4 |
| Պնդումների փունջ | 27 | 4 |
| Ընդարձակ պատասխանով | 28-32 | 5 |
| ***Ընդամենը*** | **1-32** | **35** |

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխանելու համար աշակերտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է կախված նրա քննական արդյունքը:

**Ընտրովի պատասխանով** առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել միակ ճիշտ պատասխանը եւ պատասխանների ձեւաթղթի տվյալ առաջադրանքի համապատասխան վանդակում կատարել «**X**» գրառում:



**Կարճ պատասխան** պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանների գրառման համար պատասխանների ձևաթղթում նախատեսված են համապատասխան տեղեր: Յուրաքանչյուր առաջադրանքի պատասխանը (բառ, բառակապակցություն, թիվ, թվային արժեք՝ չափման միավորով) պետք է գրել պատասխանների ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում (օրինակ՝ մագնիս, կինետիկ էներգիա, 12, 45 կգ, 21 մ/վ և այլն): **Պատասխանը պարտադիր պետք է բերված լինի միավորների ՄՀ համակարգի, եթե առաջադրանքում լրացուցիչ հրահանգ չկա:**

**Պնդումների փնջի** յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը 4 միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում: Յուրաքանչյուր սխալ նշված պատասխանի համար առաջադրանքին տրվելիք միավորներից հանվում է մեկական միավոր: Եթե տրվող և հանվող միավորների քանակները հավասար են կամ հանվող միավորների քանակը գերազանցում է տրվող միավորների քանակը, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:




**Ընդարձակ պատասխան** պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել առաջադրանքի կատարման ողջ ընթացքը (կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով): Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում (չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ):

Աշակերտն ունի սխալ պատասխանն ուղղելու 4 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով, 1-ը՝ կարճ պատասխան պահանջող առաջադրանքների, 1-ը՝ պնդումների փնջի համար: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «X» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

### 2. Առաջադրանքների բաշխումը՝ ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները՝ ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

| Հ/հ | Թեմա | Միավորներ |
|---|---|---|
| 1 | Մեխանիկական երևույթներ | 16 |
| 2 | Ջերմային երևույթներ | 6 |
| 3 | Էլեկտրամագնիսական երևույթներ | 6 |
| 4 | Օպտիկական երևույթներ | 3 |
| 5 | Ատոմային միջուկի կառուցվածքը | 2 |
| 6 | Աստղագիտություն | 2 |
| | **Ընդամենը** | **35** |



### 3. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքների՝ պատասխանների ձևաթղթում ջնջումներով կատարված ուղղումների համար ***միավոր չի տրվում***:

Եթե թեստ-գրքույկում բացակայում է ընդարձակ պատասխաններով առաջադրանքների լուծման ընթացքը, ապա պատասխանների ձևաթղթում միայն պատասխանի գրառման համար ***միավոր չի տրվում:***

Թեստ-գրքույկը և պատասխանների ձևաթուղթը լրացվում են **կապույտ գրիչով**, իսկ ստուգումը կատարվում է **կարմիր գրիչով**:

### 4. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է **120 րոպե**:

### 5. Ցուցումներ

ա) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով պետք է ընդունել.

$\pi = 3,14$; $\pi^2 = 10$; $\sqrt{2} = 1,4$; $\sqrt{3} = 1,7$,

իսկ g = 10 Ն/կգ:

բ) Պնդումների փնջի նմուշ-օրինակ.

**27. Ապակե ձողը շփում են մետաքսով: Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:**

1) Շփելիս էլեկտրականանում է միայն ապակե ձողը:

2) Շփման հետևանքով էլեկտրոններն ապակուց անցնում են մետաքսին:

3) Շփման հետևանքով ապակու և մետաքսի վրա ի հայտ եկած լիցքերի հանրահաշվական գումարը զրո է:

4) Ապակու և մետաքսի վրա առաջացած լիցքերի հարաբերությունը -1 է:



## Հայտարարություն

Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի *«Դիլիջանի արվեստի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

**Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝**

*1) ՀՀ քաղաքացիությունը.*

*2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):*

**Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝**

*1) դիմում կառավարման խորհրդի նախագահի անունով.*

*2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.*

*3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.*

*4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.*

*5) ինքնակենսագրություն:*

*6) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը (առկայության դեպքում):*

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***2023 թվականի մայիսի 10-ից մինչեւ մայիսի 30-ը ներառյալ ամեն օր, ժամը՝ 9:00-ից մինչեւ ժամը 17:00, բացի հանգստյան (շաբաթ եւ կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից,*** Դիլիջանի արվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Դիլիջան, Կալինինի փող. 57:

Մրցույթը տեղի կունենա ***2023 թվականի հունիսի 8-ին, ժամը՝ 13:00-ին,*** Դիլիջանի արվեստի պետական քոլեջում, ք. Դիլիջան, Կալինինի փող. 57:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0268) 2-74-86, հեռախոսահամարով, էլեկտրոնային հասցեն՝ pianoart@list.ru:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի պետական հումանիտար քոլեջ»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (1 դրույք), գերմաներենի (0,25) դրույք, պատմության (0,5 դրույք) դասախոսի թափուր տեղերի համար:

**Վերոնշյալ թափուր տեղի համար կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝**

*- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,*

*- Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:*

**Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը՝**

*1. դիմում,*

*2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),*

*3. Անձնագիրը (բնօրինակը եւ պատճենը),*

*4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)*

*5. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),*

*6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,*

*7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,*

*8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),*

*9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):*

Փաստաթղթերը ընդունվում են ***2023 թվականի մայիսի 10-ից մինչեւ մայիսի 22-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչեւ 15:00:***

Մրցույթը կկայանա ***2023 թվականի մայիսի 24-ին*** (ինֆորմատիկա), ***մայիսի 25-ին՝ ժամը 14:00-ին,*** (գերմաներեն, պատմություն) Երեւանի պետական հումանիտար քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 23-99-91, (055) 05-20-38 հեռախոսահամարներով:

9-րդ դասարան

# Քիմիա. ավարտական քննության ուղեցույց

2023 թ. ավարտական քննության թեստերի համար որպես հիմք են ծառայում գործող ուսումնական ծրագիրը, դպրոցական դասագրքերը և խնդրագրքերը:

## 1. Քննական թեստում առարկայական ծրագրի ներառվելիք բաժինները եւ դրանց մոտավոր համամասնությունը

| Հ/Հ | Բաժինը | Մոտավոր համամասնությունը (%-ով)՝ ըստ դասաժամերի |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր քիմիա | 56 |
| 2 | Անօրգանական քիմիայի տարրական հիմունքները | 41 |
| 3 | Օրգանական նյութերի վերաբերյալ նախնական պատկերացումներ | 3 |
| | Ընդամենը | 100 |

## 2. Թեստի կառուցվածքը եւ գնահատման կարգը

**Թեստը ներառում է 29 առաջադրանք:**

**1 - 22-րդ առաջադրանքներն ընտրովի պատասխանով են:** Դրանցում ընդգրկված են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները: Առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է չորս պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Պատասխանների ձևաթղթում յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված է չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանի համարն ընտրելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը (տե՛ս՝ նկ. 1):

Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է մեկ միավորով:



Նկ.1

**23-րդ առաջադրանքը համապատասխանեցում է՝ կարճ պատասխանով:** Այսօրինակ առաջադրանքների համար տրվում է երկու շարք: Անհրաժեշտ է համապատասխանեցնել այդ շարքերի միավորները և ստացած պատասխանները գրառել ձևաթղթի համապատասխան մասում (տե՛ս՝ նկ. 2):

Օրինակ. **Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների հավասարումները և տեսակները:**

| Ռեակցիաների հավասարումներ | Տեսակներ |
|---|---|
| Ա) $Ba(OH)_2 + H_2SO_4 = BaSO_4 + 2H_2O$ | 1) քայքայման |
| Բ) $2Cu(NO_3)_2 = 2CuO + 4NO_2 + O_2$ | 2) միացման |
| Գ) $Fe + H_2SO_4 = FeSO_4 + H_2$ | 3) տեղակալման |
| | 4) փոխանակման |

23.

| Ա | Բ | Գ |
|---|---|---|
| 4 | 1 | 3 |

Նկ. 2

**24-25-րդը կարճ պատասխանով առաջադրանքներ են:** Առաջադրանքների և ենթաառաջադրանքների պատասխանները դրական ամբողջ թվեր են (0-9999-ը): Թեստ-գրքույկում դրանց լուծումից ստացված պատասխանների միայն թվային արժեքները պետք է լրացնել այդ նպատակի համար հատկացված տեղում՝ ձևաթղթում նախատեսված հորիզոնական չորս վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան (տե՛ս՝ նկ. 3):

**26-րդ առաջադրանքի** պատասխանը բառ է կամ բառակապակցություն: Յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր:




Նկ. 3

**27-րդ առաջադրանքը պնդումների փունջ է:**

Այս առաջադրանքում ներկայացվում է չորս պնդում, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ կարելի է տալ *«ճիշտ է»*, *«սխալ է»* կամ *«չգիտեմ»* պատասխանները: Յուրաքանչյուր պնդման դիմաց **ճիշտ** նշված *«ճիշտ է»* կամ *«սխալ է»* պատասխանի համար տրվում է մեկական միավոր: **Յուրաքանչյուր սխալ նշված *«ճիշտ է»* կամ *«սխալ է»* պատասխանի համար առաջադրանքին տրվելիք *ընդհանուր միավորից հանվում է մեկական միավոր:* Եթե հանվող միավորների թիվը գերազանցում է կամ հավասար է տրվող միավորների թվին, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է զրո: *«Չգիտեմ»* պատասխանի համար միավոր չի տրվում և չի հանվում: Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը չորս միավոր:**

Պնդումների փնջի պատասխանները պետք է լրացնել ձևաթղթում այդ նպատակի համար հատկացված տեղում՝ ըստ պահանջվող ձևի: Պատասխանների ձևաթղթում՝ յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «**X**» նշանը (տե՛ս՝ նկ. 4):




Նկ. 4

**28-րդը և 29-րդն ընդարձակ պատասխանով առաջադրանքներ են:** Այդ առաջադրանքները կատարելու համար պետք է թեստ-գրքույկում մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ողջ ընթացքը՝ պահանջվող քիմիական ռեակցիաների հավասարումներով, բոլոր քայլերի գրանցումով և հաշվարկներով: Բոլոր թեստերում **28-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է առավելագույնը 2 միավոր** (յուրաքանչյուր քայլը՝ մեկ միավոր), **29-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է առավելագույնը 3 միավորով** (յուրաքանչյուր քայլը՝ մեկ միավոր):

Օրինակ՝ **29. Ավելցուկով վերցրած կալիումի կարբոնատի լուծույթի և 10% զանգվածային բաժնով բարիումի նիտրատի լուծույթի փոխազդեցությունից առաջացել է 3,94գ նստվածք: Ի՞նչ զանգվածով (գ) բարիումի նիտրատի լուծույթ է փոխազդել:**

***Խնդրի լուծման քայլերը***

| | |
|---|---|
| 29 | 1. $K_2CO_3+Ba(NO_3)_2= 2KNO_3+ BaCO_3$ |
| | 2. $Ba(NO_3)_2$ - 0,02 մոլ |
| | 3. m(լ-թ) $Ba(NO_3)_2$ = 52,2 գ |

***Խնդրի գնահատման չափանիշները***

| | |
|---|---|
| եթե նշված երեք պատասխաններն էլ ճիշտ են գրառված | 3 միավոր |
| եթե ճիշտ է գրառված երկու պատասխան | 2 միավոր |
| եթե ճիշտ է գրառված մեկ պատասխան | 1 միավոր |

## 3. Քննական թեստում միավորների բաշխումը

Ըստ առաջադրանքների տիպերի՝ միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

**1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 22 միավոր**
**2. Կարճ պատասխանով առաջադրանքներ՝ 4 միավոր**
**3. Պնդումներ՝ 4 միավոր**
**4. Ընդարձակ պատասխանով առաջադրանքներ՝ 5 միավոր**

**Ամփոփիչ վերջնական միավորը** ստացվում է լուծված առաջադրանքների միավորների գումարից (առավելագույնը՝ **35** միավոր), որը սանդղակավորվում է:

## 4. Ցուցումներ

Քննական սենյակում թույլատրվում է ունենալ.

- *քիմիական տարրերի պարբերական աղյուսակ,*
- *աղերի լուծելիության աղյուսակ,*
- *մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը,*
- *հաշվիչ:*

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղաքունիքի մարզի *«Սեւան համայնքի Սերիկ Պետրոսյանի անվան հ. 2 «Զարթոնք» մսուր-մանկապարտեզ»* ՊՈԱԿ-ի պարուսույցի, երաժշտության դաստիարակի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

**Հաստատության դաշնակահարի, պարուսույցի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝**

*- ՀՀ քաղաքացիությունը,*
*- բարձրագույն կրթությունը:*

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

*- դիմում հաստատության տնօրենի անունով (Ձեւ 1),*
*- ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,*
*- կրթության մասին փաստաթղթի պատճենը,*
*- ինքնակենսագրություն (Ձեւ 4),*
*- աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),*
*- մեկ լուսանկար 3x4 չափի:*

Փաստաթղթերի պատճենները համեմատվում են բնօրինակի հետ, իսկ բնօրինակը վերադարձվում է հավակնորդին, եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջացված չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մայիսի 11-ից մինչեւ հունիսի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***2023 թվականի հունիսի 5-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Գեղաքունիքի մարզի Սեւան համայնքի Սերիկ Պետրոսյանի անվան հ. 2 *«Զարթոնք»* մսուր-մանկապարտեզում, հասցեն՝ ք. Սեւան, Շահումյան 31:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 91-01-73 հեռախոսահամարով:

9-րդ դասարան

# Կենսաբանություն. ավարտական քննության ուղեցույց

## Թեստի կառուցվածքը

*«Կենսաբանություն»* առարկայի 9-րդ դասարանի պետական ավարտական քննական թեստերում ընդգրկված են առարկայական ծրագրի ծավալին և բովանդակությանը համապատասխանող առաջադրանքներ:

Թեստը բաղկացած է **32 առաջադրանքից**, որոնք, ըստ առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ՝

*Աղյուսակ 1*

### Քննական թեստի առաջադրանքների բաշխումը՝ ըստ ներկայացման ձևի

| Հ/հ | Առաջադրանքները՝ ըստ ներկայացման ձևի | Առաջադրանքների քանակը՝ ըստ մասերի | Առաջադրանքների բաշխումը՝ ըստ միավորների |
|---|---|---|---|
| 1 | Ընտրովի պատասխանով | 22 | 22 |
| 2 | Կարճ պատասխանով | 8 | 8 |
| 3 | Պնդումների փունջ | 1 | 4 |
| 4 | Ընդարձակ պատասխանով | 1 | 1 |
| | **Ընդամենը** | **32** | **35** |

*Աղյուսակ 2*

### Առաջադրանքների բաշխումը՝ ըստ ծրագրային նյութի բաժինների

| Հ/հ | Թեմա | Միավորը |
|---|---|---|
| 1 | Կենդանի օրգանիզմների բազմազանությունը | 7 |
| 2 | Մարդ | 11 |
| 3 | Ընդհանուր օրինաչափություններ | 17 |
| | Ընդամենը | **35** |

### Քննական առաջադրանքների կառուցվածքային տեսակները, գնահատման չափանիշները եւ պատասխանների ձեւաթղթի լրացման կարգը

**1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Ընտրովի պատասխաններ են պահանջում **1-22-րդ առաջադրանքները**, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

Այս առաջադրանքներում ձևակերպվում է հարցը և տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից պետք է ընտրել ճիշտը:

***Նմուշ.*** **Բարձրակարգ բույսերի ո՞ր բաժնին է պատկանում եղևնին:**

*1) գետնամուշկերի* *3) մերկասերմերի*
*2) ծածկասերմերի* *4) ձիաձետերի*

**Ձևաթուղթը լրացնելու կարգը:** Պատասխանների ձևաթղթում ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված են համապատասխան թվով վանդակներ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «**X**» նշանը: Օրինակ՝ եթե առաջին առաջադրանքի ճիշտ պատասխանը 3-րդն է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝




**2. Կարճ պատասխանով առաջադրանքներ**

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում **(23-30-րդ)** անհրաժեշտ է գրել պահանջվող թիվը, բառը, բառակապակցությունը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

***Նմուշ.*** **Քանի՞ ողից է բաղկացած մարդու ողնաշարի կրծքային բաժինը:**

Պատասխան՝ ____________________

**Ձևաթուղթը լրացնելու կարգը:** Պատասխանների ձևաթղթում կարճ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համարի մոտ տրված է վանդակ, որտեղ անհրաժեշտ է գրել ճիշտ պատասխանը: Օրինակ՝ եթե 24-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 12 է, ապա ձևաթղթում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝




**3. Պնդումների փունջ**

***Պնդումների փնջում*** **(31-րդ)** տրված են կենսաբանական գործընթացների, երևույթների վերաբերյալ չորս պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ *«Ճիշտ է», «Սխալ է»* կամ *«Չգիտեմ»:* Այս առաջադրանքից հնարավոր է վաստակել առավելագույնը **4 միավոր**:

Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված *«Ճիշտ է»* կամ *«Սխալ է»* պատասխանի համար տրվում է մեկական միավոր: *«Չգիտեմ»* պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված *«Ճիշտ է»* կամ *«Սխալ է»* պատասխանի համար առաջադրանքին տրվող միավորներից հանվում է մեկական միավոր: Եթե տրվող և հանվող միավորների քանակը հավասար է կամ հանվող միավորների թիվը գերազանցում է տրվող միավորների թվին, ապա առաջադրանքի պատասխանը գնահատվում է 0: Այլ առաջադրանքներից վաստակած միավորներից որևէ միավոր չի հանվում:

***Նմուշ.*** **Տրված 4 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» տարբերակներից որևէ մեկը:**

*1) Անսեռ բազմացման դեպքում սերունդների միջև կապն իրականանում է գամետների միջոցով:*

*2) Հետերոզիգոտ առանձնյակներն առաջացնում են տարբեր տեսակի գամետներ և նրանց սերնդում նկատվում է ճեղքավորում:*

*3) Արտաքուստ անհետացող հատկանիշն անվանում են դոմինանտ:*

*4) Մարդու բջիջների կորիզում առկա են 46 զույգ քրոմոսոմներ:*

**Ձևաթուղթը լրացնելու կարգը:** Տվյալ պնդման դիմացի երեք վանդակներից որևէ մեկում պետք է դնել «X» նշանը:




***Ընդարձակ պատասխան*** պահանջող առաջադրանքը մեկն է՝ **32-րդը,** որի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընտրովի պատասխանով առաջադրանքների համար պատասխանների ձևաթղթում կա ուղղման 2 հնարավորություն: Կարճ պատասխանով առաջադրանքների և պնդումների փնջի համար պատասխանների ձևաթղթում կա ուղղման 1-ական հնարավորություն:

### Ընդհանուր ցուցումներ

Քննության տևողությունը **120 րոպե** է:

Թեստ-գրքույկի դատարկ մասերը օգտագործվում են սևագրության համար:

# Աշխարհագրություն. ավարտական քննության ուղեցույց

2022-2023 ուստարվա ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում *«Աշխարհագրություն»* առարկայի ուսումնական ծրագիրը և դպրոցական դասագրքերը:

### 1. Քննական թեստում ներառված բաժինները եւ դրանց մոտավոր համամասնությունները

| Հ/հ | Բաժին | Համամասնություն (%-ով) |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին | 3 |
| 2 | Աշխարհագրական թաղանթը և նրա ոլորտային կառուցվածքը | 17 |
| 3 | Մայրցամաքներ և օվկիանոսներ | 14 |
| 4 | Հասարակական աշխարհագրություն | 14 |
| 5 | Տարածաշրջաններ և երկրներ | 26 |
| 6 | Հայաստանի աշխարհագրություն | 26 |
| | **Ընդամենը** | **100** |

### 2. Թեստի կառուցվածքը

Ավարտական քննական թեստը բաղկացած է **32 առաջադրանքից:**

***Ընտրովի պատասխանով առաջադրանքներ են 1-22-րդը:*** Այս առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4 տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Դրանց պատասխանելիս ընտրած պատասխանի համարը թեստում պետք է վերցնել շրջանակի մեջ, որից հետո «**X**» նշանով նշել պատասխանների ձևաթղթում:

Օրինակ՝ **առաջադրանք 7. Նշված երկրներից ո՞րն է գտնվում Եվրոպայում:**

1) Չինաստանը
2) Բրազիլիան
3) Ֆրանսիան
4) Ալժիրը




Օրինակ՝ **առաջադրանք 8. Ո՞ր շարքում է տրված մարզերի և մարզկենտրոնների ճիշտ համապատասխանությունը:**

1. Արագածոտն ա. Արտաշատ
2. Լոռի բ. Իջևան
3. Տավուշ գ. Աշտարակ
4. Արարատ դ. Վանաձոր

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1- դ, 2-ա, 3-բ, 4-գ




*շարունակությունը՝ էջ 19*

9-րդ դասարան

# Աշխարհագրություն. ավարտական քննության ուղեցույց

*սկիզբը՝ էջ 18*

***Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են 23-30-րդը:***

Այս առաջադրանքների բաց թողած տեղում՝ գծի վրա, պետք է գրել պատասխանը, որը կարող է լինել բառ, բառակապակցություն կամ թիվ:

Օրինակ՝ **առաջադրանք 24. Ինչպե՞ս է կոչվում երկրի խորքից դուրս ժայթքած, ջրային գոլորշիներն ու գազերը կորցրած մագման:**

Պատասխան՝ __լավա__:

**Այս տիպի առաջադրանքների** պատասխանները նս պետք է անցկացնել պատասխանների ձևաթղթի մեջ:

| 24 | Լավա |
|---|---|

***31-րդ առաջադրանքը պնդումների փունջ է:***

Պնդումների փնջում տրվում է որևէ թեմայի վերաբերյալ 4 պնդում, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ *«Ճիշտ է», «Սխալ է»* կամ *«Չգիտեմ»:*

